ԱԼԻՔ

Ազգային, հասարակական, քաղաքական, մշակութային օրաթերթ

92-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 31 (24584), հատավաճառ՝ 20000 ռիալ

سال نودودوم - شماره (۲۴۵۸۴) ۳۱ - تکشماره ۲۰۰۰۰ ریال - ۸ صفحه

آلیک

روزنامه سیاسی، اجتماعی، فرهنگی

ՇԱԲԱԹ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2024

شنبه – ۲۱ بهمن ۱۴۰۲

www.alikonline.ir

E-mail: info@alikonline.ir

به نام ایران سربلند و سرافراز

۴۵ سال، با هم و در کنار هم

طلوع فجر مبارک باد

22 Բահմանի յաղթապանծ երթը

(Տես 2-րդ էջում)

Ամենայն Հայոց կաթողիկոսը հանդիպել է ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցչի հետ

Հինգշաբթի՝ փետրուարի 8-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցաւ հանդիպում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի եւ ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր-Խաչատուրեանի միջեւ։

Հանդիպման ընթացքում քննարկուեցին Հայաստանի ներկայիս իրավիճակի, արցախեան հիմնախնդրի, արցախահայութեան իրաւունքների պաշտպանութեան, յատկապէս Արցախ հաւաքական վերադարձի հարցերը։

Տեղեկութիւններ փոխանակուեցին հայրենիքում եւ համաշխարհային մակարդակով Արցախի հարցի արդարացի լուծման կապակցութեամբ կատարուած աշխատանքների եւ նախատեսուած համահայկական նախաձեռնութիւնների վերաբերեալ։

Շեշտուեց արցախահայերին մարդասիրական օժանդակութիւններ տրամադրելու եւ Հայաստանի պետականութեան հիմքերի ամրապնդման աշխատանքի շարունակութեան, ի խնդիր ազգային միասնականութեան զօրացման եւ առկայ մարտահրաւէրների յաղթահարման ազգային կառոյցների միջեւ համագործակցութեան ընդլայնման եւ հայ ժողովրդի կեանքում եկեղեցու դերի խորացման կարեւորութիւնը։

ՀՅԴ Մամլոյ դիւան
08 փետրուարի, 2024 թ.

Արամ Ա կաթողիկոսն ընդունել է Յակոբ Բագրատունուն եւ Իշխան Սաղաթելեանին

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա կաթողիկոսն իր նստավայրում ընդունել է Լիբանանի խորհրդարանի հայազգի պատգամաւոր Յակոբ Բագրատունուն եւ ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմնի ներկայացուցիչ Իշխան Սաղաթելեանին։

Հանդիպման ընթացքում քննարկուել են Հայաստանի շուրջ ստեղծուած արտաքին խնդիրներն ու դրանց վերաբերեալ առկայ մտահոգութիւնները, շեշտուել է երկրի ամբողջականութիւնն ու անվտանգութիւնը պահպանելու հրամայականը։ Անդրադարձ է կատարուել նաեւ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններն առաւել խորացնելու հնարաւորութիւններին, յատկապէս հայ ժողովրդի եւ Հայրենիքի ճակատագրական այլ հանգրուանում։

Arfd.am

Յեղափոխութեան յաղթանակի տարեդարձի առիթով՝

Միաստուածային կրօնների նահատակների շիրիմների օծման եւ խնկարկման արարողութիւնը՝ Նոր Բուրաստան գերեզմանատանը

(Տես 8-րդ էջում)

Լուսանկարները՝ ՀԱՏԻՍԻ

Հ. Մ. Մ. «Նայիրի» միութեան Գրական խմբի եւ Արեւստից բաժանմունքի նախաձեռնութեամբ՝

Նշանաւորուեց Վարդանանց տօնը

(Տես 8-րդ էջում)

«Հայ Դատն այսօր»
15-րդ խորհրդաժողով

ԱՐՑԱԽԻ ԿՈՐՈՒՍՏ, ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄ.
ԳՈՅԱՊԱՅՔԱՐ ՀՀ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ

Փետրուարի 15-16, 2024 թ., Թեհրան



ՀՈՒՍԿ հաստատութիւն

ARAM®
coffee
ԱՐԱՄ
قهوه آرام
սուրճ
فروشگاه مرکزی:
قائم مقام فراهانی–شماره ۶۴
88303478 եւ 88308730
www.aramcoffee.com
instagram:aram__coffee

Դեսպան Սոբհանի.

«Համոզված ենք, որ Իրան-Հայաստան յարաբերութիւնների ապագան խոստումնալից է եւ ոչ մի ուժ չի կարողանայ այն իր ուղեգծից դուրս մղել»

Երեւանում, փետրուարի 9-ին անցկացել է Իրանի Իսլամական յեղափոխութեան յաղթանակի 45-րդ տարեդարձին նուիրուած միջոցառում, որին ՀՀ-ում Իրանի դեսպանի հրաւէրով մասնակցել են ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորեանը եւ այլ բարձրաստիճան պաշտօնեաներ:

Միջոցառմանը դեսպան Մեհդի Սոբհանին հանդէս է եկել ելոյթով, նշելով, որ Թեհրանը պաշտպանում է կայուն խաղաղութիւնը տարածաշրջանում, եւ աջակցում է Հայաստանի կառավարութեան «Խաղաղութեան խաչմերուկ» նախագծին:

Դեսպան Սոբհանին միեւնոյն ժամանակ ասել է, որ ցանկացած խաղաղութիւն պէտք է իր մէջ ներառի յարգանք երկրների ազգային ինքնիշխանութեան, տարածքային ամբողջականութեան եւ միջազգայնօրէն ճանաչուած սահմանների անփոփոխութեան նկատմամբ:

«Իրանի Իսլամական Հանրապետութիւնը միշտ եղել է տարածաշրջանային խնդիրների ու ճգնաժամերի լուծման մաս: Այս զգայուն պահին իմ երկիրը կը շարունակի ջանքերը՝ տարածաշրջանում խաղաղութիւն եւ կայունութիւն ապահովելու համար: Իրանի Իսլամական Հանրապետութիւնը պաշտպանում է կայուն խաղաղութիւնը տարածաշրջանում: Իրանի Իսլամական Հանրապետութեան տեսակէտն է՝ ցանկացած խաղաղութիւն պէտք է իր մէջ ներառի յարգանք երկրների ազգային ինքնիշխանութեան, տարածքային ամբողջականութեան եւ միջազգայնօրէն ճանաչուած սահմանների անփոփոխութեան նկատմամբ:

Իրանի Իսլամական Հանրապետութիւնը ողջունում եւ աջակցում է տարածաշրջանային նախաձեռնութիւնները, այդ թւում՝ Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Փաշինեանի կողմից ներկայացուած «Խաղաղութեան խաչմերուկ» նախաձեռնութեանը՝ ուղղուած երկրների ազգային ինքնիշխանութեան շրջանակներում հաղորդակցութեան ուղիների աւելացմանը եւ ապաշրջափակմանը»:

Դեսպանը, անդրադառնալով Թեհրանում Իրանի Իսլամական Հանրապետութեան եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ կայանալիք միջկառավարական համատեղ յանձնաժողովի 18-րդ նիստին, նշել է, որ այն աւելի շատ հնարաւորութիւններ կընձեռի յարաբերութիւնների զարգացման համար:

Դեսպանը նաեւ խօսել է առեւտրաշրջանառութեան ծաւալների աւելացումից եւ ասել, որ շուրջ 120 հազար իրանցիների այցը Հայաստան երկու երկրների յարաբերութիւնների ընդլայնման եւ ժողովուրդների միջեւ շփումների եւ հաղորդակցութեան աւելացման ապացոյցն է:

«Կասկած չունեմ, որ Թաւրիզում Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոսութեան բացումը նախկինի համեմատ աւելի մեծ թափ կը հաղորդի երկու երկրների յարաբերութիւններին»,- ասել է նա:

Նկատելով, որ նախորդ տարի երկու երկրների միջեւ գազ-էլեկտրաէներգիայի դիմաց համաձայնագիրը երկարաձգել է՝ հնարաւորութիւն ստեղծելով աւելի մեծ ծաւալների գազ եւ էլեկտրաէներգիա փոխանակելու համար, դեսպանն ասել է, որ առկայ է հսկայական ներուժ երկու պետութիւնների եւ երկու ժողովուրդների միջեւ համագործակցութիւնն ամրապնդելու համար:

«Համոզված ենք, որ Իրան-Հայաստան յարաբերութիւնների ապագան խոստումնալից է եւ ոչ մի ուժ չի կարողանայ այն իր ուղեգծից դուրս մղել»,- ասել է նա:

Անդրադառնալով Իրանի Իսլամական յեղափոխութեան 45-րդ տարեդարձին՝ դեսպանը նշել է. «45 տարի առաջ այս օրերին Իմամ Խոմէյնիի գլխաւորութեամբ Իրանի ժողովրդի փոթորկալից շարժումը յաջողութեամբ պսակուեց, եւ որի արդիւնքում տապալուեց բռնապետական թագաւորական համակարգը եւ այն փոխարինուեց ժողովրդի կամքի եւ ցանկութեան վրայ հիմնուած համակարգով: Ի հեճուկս շարունակական թշնամանքներին, դաւադրութիւններին, ահաբեկչական գործողութիւններին, պատերազմին եւ ժողովրդի ու իսլամական համակարգի դէմ կիրառուող դաժան պատժամիջոցներին, Իրանի Իսլամական Հանրապետութիւնն աւելի դիմացկուն եւ վճռական է ընտրել ճճի, բարգաւաճման, փառքի ու արժանապատուութեան ուղին»:

News.am

22 Բահմանի յաղթապանծ երթը

Այս օրերին ողջ Իրանը, մի անգամ եւս, ապրում է երջանկութիւնը 45 տարիներ առաջ իր արեամբ նուաճած Իսլամական յեղափոխութեան մեծ յաղթանակի, որով երկիրն ու ողջ ժողովուրդը ինքն իրեն գտաւ նոր եւ լուսաւոր ճանապարհի վրայ:

45 տարիներ առաջ սկսած Իրանի Իսլամական յեղափոխութիւնը առաջնորդութեամբ հանգուցեալ Իմամ Խոմէյնիի, այսօր որեւէ մէկ ժամանակից աւելի հաստատակամ ու ինքնավստահ շարունակում է իր յեղափոխական գնացքը յոյսի ու լոյսի նոր հեռանկարներ բանալով իր ժողովրդի կեանքում:

Հարկ է մի պահ մտաբերել, որ 45 տարիներ առաջ սկսուած Իսլամական յեղափոխութիւնը ծանր ու դժուարին պահեր ունեցաւ եւ նոյնքան ծանր վիճակների միջից անցաւ, սակայն յեղափոխութեան ղեկավարի հրաշունչ ու արդարակշիռ խորհուրդներն ու պատգամները եւ միւս կողմից էլ յեղափոխութիւն կատարած ժողովրդի աներկբայ հաւատն ու անկոտրում կամքը այդ դժուարութիւնները շրջանցեցին ու կարողացան վճռական հակահարուած հասցնել բոլոր նրանց, ովքեր փորձեցին առաջը առնել սկսած Յեղափոխութեան:

Իրանցի ժողովուրդը չի կարող մոռանալ այն օրերը, երբ հազիւ սկսած յեղափոխութիւնը յետադիմական եւ այլամերժ ուժերի խորհրդանիշ եղող այդ օրերի Իրաքեան կառավարութիւնը, Արեւմտեան կայսերապաշտ ուժերի դրդումով, յարձակում գործեց Իրանի Իսլամական Հանրապետութեան վրայ, այն հաւատով, որ պիտի կարողանայ իսլամական յաղթապանծ Յեղափոխութեան առաջը պահել եւ կամ այն վերացնել:

Կանգնած պարտադրեալ պատերազմի առաջ եւ իր ամբողջական հայրենիքի պահպանման ու անվրտանգութեան խորը գիտակցութեամբ զինուած Իրանի ժողովուրդը մէկ մարդու նման ու առանց կրօնական, ազգային ու ցեղային խտրութեան կուրծք տուեց թշնամու գրոհներին եւ քաջաբար պաշտպանեց իր հայրենիքն ու նոր ձեռքբերած Յեղափոխութիւնը:

Այո՛, Իրանի Իսլամական Հանրապետութեան ժողովուրդը անխտիր կողք-կողքի ու ձեռք-ձեռքի տուած պաշտպանեց իր հայրենիքը, պաշտպանեց իր յեղափոխութիւնն ու արժանապատուութիւնը:

Հազարաւոր տարիներ Իրանի օրհնեալ հողի վրայ ապրող, ստեղծագործող հայը անմասն չմնաց է՛ւ յեղափոխութեան կերտման ընթացքից եւ մանաւանդ պարտադրեալ պատերազմից: Նա իր բոլոր հնարաւորութիւններն ու կարողականութիւնը անսակարկ կերպով ի սպաս դրեց իր հայրենիքի պաշտպանութեանն, որովհետեւ հաւատացած էր ու հաւատում է, որ Իրանի Իսլամական Հանրապետութիւնը իբրեւ երկիր իր պատմութեամբ, անցեալի, ներկայի եւ ապագայի կեանքով իր էութեանն անբաժանելի մասն է: Այս գիտակցութեամբ գործեց ու պայքարեց հայը. խաղաղութեան ժամանակ իր գրիչով ու ստեղծագործական մտքով, իսկ պատերազմի ժամանակ էլ զէնքով ու զրահով:

Իրանի Իսլամական Յեղափոխութեան 45-րդ տարեդարձի առիթով յանուն մեր ողջ ժողովրդին ողջունում ենք Իրանի Իսլամական Յեղափոխութեան հոգեւոր առաջնորդ այաթ. Սէյէդ Ալի Խամենէիին եւ երկրի աշխարհական ու հոգեւորական ղեկավարութեան եւ ողջ ժողովրդին: Շնորհաւորում ենք բոլորին եւ նորանոր նուաճումներ եւ ձեռքբերումներ ցանկանում:

Յաղթապանծ Յեղափոխութեան բարեբաստիկ 45-րդ ամեակի առիթով յարգանքի տուրք ենք մատուցում Յեղափոխութեան ռահվիրա առաջնորդի՝ հանգուցեալ Իմամ Խոմէյնիի եւ յանուն յեղափոխութեան եւ իրանեան օրհնեալ հայրենիքի պաշտպանութեան, ամբողջականութեան եւ անվտանգութեան համար իրենց կեանքը զոհած բազմահազար նահատակների:

Փառք ու յարգանք նրանց, ովքեր կերտեցին յեղափոխութիւնը.

Փառք ու պատիւ նրանց, ովքեր պաշտպանեցին յեղափոխութիւնն ու հայրենիքը.

Հազար փառք նրանց, ովքեր դեռ շարունակում են պայքարը յանուն արդարութեան, խաղաղութեան եւ յեղափոխութեան գաղափարախօսութեան իրականացման ու Իրանի Իսլամական Հանրապետութեան անսասանութեան:

ՍԵՊՈՒՀ ԱՐՔ. ՍԱՐԳՍԵԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴ ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ
5 փետրուարի 2024 թ.,
Թեհրան

Իրանում պանթուրքիստ գործակալների վոհմակ է ձերբակալուել

«ԱԼԻՔ» - «Թասնիմ» լրատուական գործակալութեան համաձայն՝ Բաքուի համար լրտեսութեան, ինչպէս նաեւ ահաբեկիչներին աջակցելու մեղադրանքով գործակալական ցանց է բացայայտուել եւ ձերբակալուել են մի քանի կասկածելիներ:

Գործի կապակցութեամբ չի ուշացել անջատողական հակումներով կայքերից մէկի խմբագրի հակազդեցութիւնը, ով իր վարած կայքում հրապարակելով ձերբակալուածներից մի քանիսի լուսանկարները պնդել է, որ ձերբակալուածներն իրականում այն անձինք են, ովքեր վերջերս յայտնուել էին «Թասնիմ»-ի ուշադրութեան կենտրոնում:

Ձերբակալութիւնների մասին հրապարակուած տեղեկութիւններում չի խօսուել այն մասին, թէ տուեալ անձինք ունե՞ն Իրանի քաղաքացիութիւն, թէ՞ օտարերկրեայ քաղաքացիութեան տէր անձինք են:

Դէպքի առնչութեամբ քննարկումներ են ծաւալուել նաեւ փորձագիտական շրջանակներում: Տելեգրամեան ալիքներից մէկում նշուած է, որ անջատողական այդ տարրի հրապարակումն ինքնին խոստովանութիւն էր առ այն, որ ազգայնական տարրերն առաջնորդուում են Բաքուի ռեժիմի հետախուզական համակարգի կողմից, քանի որ այդ մասին բարձրաձայնումները առաջինը կատարուել են հէնց Բաքուի պետական մարմինների ու նրանց խօսնակ հանդիսացող հեռուստալիքի կողմից:

Ձերբակալուած անձանց անունները հրապարակելով, տելեգրամեան ալիքներում նշուած է, որ Ալիեւի ռեժիմի կողմից առաջադրանքներ ստացող Մոհամմադով անունով անձնաւորութիւնը, ով նաեւ հակահրանական լրատուամիջոցի խմբագիրն է, Իրանում Բաքուի գործակալական ցանցի ձերբակալուած լրտեսների մասին աղմկելով յաւելել է նաեւ, որ իրենց չի յաջողուել տեղեկութիւն ստանալ «գերի» ընկած իրենց ընկերների մասին: «Տասը ակտիւիստ անհետ կորել է»,- գրել է նա: Նա շարունակութեան մէջ նշել է, որ ում որ զանգում է եւ անպատասխան է մնում նրա զանգը, ենթադրաբար՝ քանի նրա հեռախօսին զանգ չի գնում, ապա նա նոյնպէս ձերբակալուածների շարքում է»,- շշմեցնող տրամաբանութեամբ նշել է

(Շար. 7-րդ էջում)

Կեղծ անուններ՝ Երեւանի քաղաքապետի Փաշինեանի թեկնածուի նւիրատուների ցուցակում



ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ
«Կալիֆորնիա կուրիէր» թերթի
հրատարակիչ
www.TheCaliforniaCourier.com

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը հինգ տարի շարունակ պարծեցել է ընտրութիւններում իր կուսակցութեան արդար վարքագծի համար՝ մեղադրելով նախկին ղեկավարներին կեղծ ընտրութիւններ անցկացնելու մէջ: Ինչպէս ասում է առակը՝ «Ապակէ տներում ապրող մարդիկ չպէտք է քարեր նետեն»:

Փաշինեանն օգտագործել է իր կառավարութեան զգալի ռեսուրսները՝ տեղական եւ խորհրդարանական ընտրութիւնների ժամանակ իր քաղաքական հակառակորդների նկատմամբ անարդար առաւելութիւն ձեռք բերելու համար: Այնուամենայնիւ, որոշ ընդդիմադիր թեկնածուներ ընտրելուց յետոյ հեռացւում են Փաշինեանի կողմնակից դատաւորների կողմից ձերբակալւելուց, դատւելուց եւ բանտարկւելուց յետոյ:

2023 թւականի սեպտեմբերի 17-ին Երեւանի աւագանու ընտրութիւնները Փաշինեանի կուսակցութեան կողմից իրականացւած կեղծիքների վերջին օրինակն է: Սեփական կուսակից Հայկ Մարութեանին, իշխող կուսակցութեանը քննադատելու համարձակութեան համար քաղաքապետի պաշտօնից հեռացնելուց յետոյ, Փաշինեանը որոշել էր նրան փոխարինել նախկին փոխվարչապետ Տիգրան Աւինեանով:

Փաշինեանի աջակիցները դրամահաւաքի սովորական հնարքի էին դիմել, ապահովելու համար, որ հասարակութեան կողմից քիչ աջակցութիւն վայելող Աւինեանը դառնայ Երեւանի քաղաքապետ: Հետաքննութեան արդիւնքում պարզւել է, որ իրենց նպատակին հասնելու համար նրանք կեղծ անուններով թաքուն անձանցից հաւաքել են աւելի քան մէկ միլիոն դոլար նախընտրական արշաւին:

Infocom.am-ի լրագրողները կապ են հաստատել նւիրատուների ցուցակում յայտնւած անուններով մարդկանց հետ եւ պարզել, որ նրանցից ոմանք կեղծ են:

Սկանդալը սկսւում է նրանից, որ Փաշինեանի աջակիցը վերցրել է ընկերուհու նոյնականացման քարտը՝ օգտագործելով նրա անունը՝ օրէնքով թոյլատրւած առաւելագոյն գումարը՝ 2.5 միլիոն դրամ (6200 դոլար), Փաշինեանի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեանը նւիրաբերելու համար: Այս կնոջ նոյնականացման քարտն օգտագործւել է իրական նւիրատուի անունը թաքցնելու համար: Նրան տեղեակ չէին պահել, որ նա ընդգրկւած է որպէս Փաշինեանի կուսակցութեան խոշոր նւիրատու: Խարդախ գործարքը տեղի է ունեցել 2023 թւականի յուլիսի 31-ին՝ մի քանի ժամ առաջ նոյն երեկոյեան տեղի ունեցած դրամահաւաքից, որի ժամանակ Փաշինեանի կուսակցութիւնը պնդում էր, որ 987 նւիրատուներ հաւաքել են աւելի քան մէկ միլիոն դոլար (506 միլիոն դրամ) աւագանու ընտրութիւնների համար:

Ի պատասխան լրատւամիջոցի հարցմանը՝ Փաշինեանի կուսակցութիւնը հրաժարւել է հրապարակել նւիրատուների անունները: Միայն «Ինֆորմացիայի ազատութեան կենտրոն» կազմակերպութեան կողմից դատական հայց ներկայացնելուց յետոյ կուսակցութիւնը 2024 թւականի յունւարի 12-ին հրապարակեց կեղծ անուններով նւիրատուների ցուցակը: Ցուցակում ընդգրկւած էր 996 անուն, որոնք արշաւին նւիրաբերել էին մօտ 1.3 մլն. դոլար (509 մլն. դրամ):

Իբր թէ 2.5 միլիոն դրամ նւիրաբերող կինը տեսնելով իր անունը նւիրատուների ցուցակում, խիստ վրդովւել է: Infocom.am-ը կապ է հաստատել նւիրատուների ցուցակի այլ անունների հետ: Նրանցից շատերը զարմացած էին, որ իրենց անուններն օգտագործւել են որպէս քաղաքական արշաւի նւիրատուների: Նւիրատուների 87 տոկոսը նշւած է եղել որպէս մէկ միլիոն դրամից աւելի նւիրատու, որոնցից 70 տոկոսը (140 ֆիզիկական անձ)՝ առաւելագոյնը 2,5 մլն. դրամ: Խոշոր նւիրատուների թւում էին իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան աւագանու 88 թեկնածուները:

Infocom.am-ը բացայայտել է, որ ամենամեծ նւիրատուները եղել են խոշոր ընկերութիւնների սեփականատէրերը, նրանց ղեկավարներն ու աշխատակիցները: Խոշոր նւիրատուներից ութն աշխատել են մէկ յայտնի ընկերութիւնում: Հաստատւել է, որ դրա աշխատակիցները իրենց անձնական միջոցներից չեն նւիրաբերել, այլ ձեռնարկատէրերը վճարել են նրանց անուններով: Մի քանի այլ խոշոր գործարարներ նշւած էին որպէս առաւելագոյն գումար նւիրաբերողներ: Ցուցակում յայտնւած նւիրատուների թւում են եղել նաեւ Երեւանի աւագանու աշխատակիցների անունները:

Infocom.am-ը, կապ հաստատելով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան տրամադրած ցուցակի նւիրատուների հետ, եզրակացրել է, որ նւիրատուների ցուցակի որոշ անուններ «առնւազն կասկածելի են: Հետաքննութիւնը ցոյց է տւել, որ կազմակերպւած մեխանիզմներով անյայտ ծագման դրամական միջոցներ են ուղղւել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան դրամահաւաքին, երբեմն էլ՝ գործընթացից հիմնականում անտեղեակ քաղաքացիների անուններով»: Բացի այդ, քանի որ օրէնքը թոյլ չի տալիս նւիրատւութիւնների կանխիկ փոխանցում, Infocom.am-ն Աւինեանի նախընտրական շտաբի պատասխանատուներից հետաքրքրւել է, թէ ինչպէս են նւիրատւութիւնները կատարւել դրամահաւաքի ժամանակ: Նրանք պատասխանել են, որ «Հայէկոնոբանկի» աշխատակիցները, որոնք ներկայ են եղել, գումարը փոխանցել են կուսակցութեան հաշւեհամարին: «Հայէկոնոբանկի» բաժնետէրերի թւում է նաեւ իշխող կուսակցութեան պատգամաւոր, հանրայայտ օլիգարխ Խաչատուր Սուքիասեանը՝ յայտնի Գոգօ մականունով:

Infocom.am-ը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան փոխնախագահ Վահագն Ալեքսանեանին յայտնեց, որ նւիրատուները, որոնց հետ կապ են հաստատել, ասել են, որ նման նւիրատւութիւններ չեն արել: Ալեքսանեանը ճշտելու համար հարցրեց այդ անձանց անունները: Երբ նրան ասացին, որ Infocom.am-ը չի կարող յայտնել նրանց անունները, Ալեքսանեանը պատասխանեց, որ միգուցէ իրենք ճիշտ անձանց չեն բացայայտել:

Ըստ օրէնքի՝ կառավարութիւնը կարող է ստուգել քարոզարշաւի դրամահաւաքը ընտրութիւններից միայն ութ ամիս անց: Օրէնքում ասւում է, որ մինչեւ ընտրութիւններին յաջորդող տարւայ մայիսի 31-ը կուսակցութիւններն իրենց ֆինանսական հաշւետւութիւնները պէտք է ներկայացնեն Հակակոռուպցիոն յանձնաժողովին:

Երբ Infocom.am-ը հարցրեց Կենտրոնական ընտրական յանձնաժողովի նախագահ, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան նախկին պատգամաւոր Վահագն Յովակիմեանին նւիրատուների ցուցակը հրապարակելուց հրաժարւելու մասին, Յովակիմեանը պատասխանեց. «Դուք քաղաքական ուժերին վերաբերւում էք որպէս պոտենցիալ յանցագործների»:

Սա Երեւանի աւագանու ընտրութիւնների ժամանակ Փաշինեանի կուսակցութեան կատարած կեղծիքի բացայայտ պատկերն է: Այնուամենայնիւ, ընտրութիւնները իշխող կուսակցութեան ակնկալած յաջողութեամբ չանցան: Աւինեանը քաղաքապետ ընտրւեց միայն այն բանից յետոյ, երբ ընդդիմադիր կուսակցութիւնները, որոնց աւագանու անդամներն աւելի շատ էին, քան իշխող կուսակցութեանը, չկարողացան միաւորել իրենց ձայները՝ քաղաքապետի սեփական թեկնածուին ընտրելու համար:

Սա է այսպէս կոչւած ժողովրդավարութեան տխուր պատկերը Հայաստանում: Ես խիստ կասկածում եմ, որ Հակակոռուպցիոն յանձնաժողովը որեւէ իրական գործողութիւն կը ձեռնարկի Փաշինեանի կուսակցութեան դէմ ընտրական օրէնքները խախտելու համար:

Թարգմանութիւնը՝
ՌՈՒԶԱՆՆԱ ԱՒԱԳԵԱՆԻ

Զէնք՝ նաւթի դիմա՞ց, թէ՞ աւելին. Ադրբեջան-Իսրայէլ կապերի ներկան ու ապագան

(Շարունակութիւն նախորդ համարից)

ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆԵԱՆ
ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտ, ասպիրանտ

Տնտեսական համագործակցութիւն

Երկու երկրների միջեւ առեւտրաշրջանառութիւնը պտտւում է երկու գործօնի շուրջ: Մի կողմից Ադրբեջանը նաւթ եւ նաւթամթերք է արտահանում Իսրայէլ: Միւս կողմից Իսրայէլը զէնք, զինամթերք եւ ռազմական տեխնիկա է մատակարարում Ադրբեջանին: Առեւտրի մասին տեւալներին յետադարձ հայեացք նետելով՝ նոյնիսկ կարելի է տեսնել, թէ երբ են երկու երկրները պատրաստւել մարտական գործողութիւնների կամ այլ ճգնաժամերի:

Այսպէս, Ադրբեջանից Իսրայէլ արտահանումն իր պիկին հասել է 2008 թւականին՝ գերազանցելով 3,5 միլիարդ դոլարը: Առհասարակ, Ադրբեջանից Իսրայէլ արտահանումը մշտապէս եւ գրեթէ ամբողջութեամբ կազմւած է եղել նաւթից եւ փոքր քանակութեամբ նաւթամթերքից: Միւս ապրանքները չնչին տեղ ունեն արտահանման մէջ:

Այս պիկին յաջորդել է Իսրայէլից Ադրբեջան արտահանման պիկը՝ աւելի քան 260 միլիոն դոլարի ապրանք է մատակարարւել Բաքուին: Սրա մեծ մասն էլ կազմել են ռադիո եւ նաւիգացիոն սարքաւորումները, սափացիոն սարքաւորումները, սպառազինութիւնը եւ զինամթերքը: Այս փուլը համընկնել է Իրանի շուրջ լարւածութեան աճին, որին կանդրադառնանք նաեւ ռազմական համագործակցութեան մասին հատւածում:

Երկու երկրների միջեւ առեւտրի յաջորդ պիկը եղել է 2016 թւականին՝ համընկնելով Ապրիլեան պատերազմի, դրանից յետոյ Ադրբեջանի սպառազինման հետ: Այդ տարի Իսրայէլը եւս 260 միլիոն դոլարի ապրանքներ է ուղարկել Ադրբեջան. մեծ մասը՝ նորից սպառազինութիւն, ռազմական տեխնիկա, զինամթերք, սարքաւորումներ:

Այս փուլում Ադրբեջանից Իսրայէլ արտահանումը այնքան էլ մեծ չի եղել, նոյնիսկ աւելի փոքր է եղել, քան նախորդ տարիներին:

Այստեղ հարկ ենք համարում շեշտել, որ երկրները կարող էին եւ վստահաբար թաքցրել են իրենց առեւտրի որոշ տեւալներ: Տեւալները, որ վերցրել ենք ՄԱԿ-ին պատկանող ռեսուրսից՝ UN Comtrade հարթակից, հաւաքւում են երկրների կողմից ինքնակամ զեկուցումների միջոցով եւ կարող են չարտայայտել ամբողջական պատկերը:

Միեւնոյն ժամանակ, այն, ինչ ցոյց են տալիս այս տեւալները, արդէն իսկ վտանգաւոր միտումներ է բացայայտում: 2022 թւականի տեւալներով՝ Իսրայէլը կըրկին Ադրբեջանին մատակարարել է հիմնականում ռազմական նշանակութեան ապրանքատեսակներ, այդ թւում նաեւ՝ ԱԹՍներ:

Սպառազինութիւնների մատակարարումների դիմաց Ադրբեջանը մշտապէս վարձահատոյց է եղել ոչ միայն նաւթով, այլեւ լրացուցիչ քաղաքական ու տընտեսական արտօնութիւններով:

Մասնաւորապէս, Իսրայէլն առաջին երկրներից էր, որ հնարաւորութիւն ստացաւ այսպէս կոչւած վերակառուցման աշխատանքներ իրականացնել 2020 թւականի Արցախեան պատերազմի հետեւանքով Ադրբեջանի օկուպացիայի տակ յայտնւած արցախեան տարածքներում: Իսրայէլական ընկերութիւնները օկուպացւած Կովսականում «խելացի գիւղի» կառուցման նախագծին ներգրաւեցին:

Դրանից բացի, իսրայէլական ընկերութիւնները յայտեր ներկայացրին նաեւ «կանաչ էներգիայի», գիւղատնտեսութեան, հիւանդանոցների կառուցման ոլորտներում գործունէութեան համար: Ըստ Բաքւում Իսրայէլի դեսպանի՝ Արցախից գրաււած տարածքներում շինարարական աշխատանքներին մասնակցելու համար յայտ է ներկայացրել մի քանի տասնեակ իսրայէլական ընկերութիւն:

Երկրները համագործակցում են նաեւ գիւղատնտեսութեան ոլորտում: Օրինակ, 2022 թ. համագործակցութիւն է հաստատւել Ադրբեջանի ագրարային համալսարանի եւ Իսրայէլական «Արաւա» գիւղատնտեսական կրթութեան ուսումնական կենտրոնի միջեւ: Կողմերի միջեւ ստորագրւած յուշագրի համաձայն՝ ադրբեջանցի 50 ուսանող վերապատրաստւելու է իսրայէլական նշւած կենտրոնում:

2022-ին եւ 2023-ին Ադրբեջան է այցելել Իսրայէլի գիւղատնտեսութեան նախարարը: 2023-ի սեպտեմբերին երկու երկրների գիւղատնտեսութեան նախարարութիւնները ստորագրել են ճանապարհային քարտէզ 2023-2025 թթ. ոլորտում համագործակցութեան վերաբերեալ, ինչպէս նաեւ հռչակագիր «գիւղատնտեսութեան ոլորտում համագործակցութիւն մտադրութիւնների» մասին: Գիւղատնտեսութեան ոլորտում համագործակցութիւնը ներառում է նաեւ ոռոգման համակարգերի ներդրումը (Իսրայէլն այս ոլորտում համաշխարհային առաջատարներից է):

(Շար.2)

Յեղափոխութեան տօնի դասախօսութիւն՝ «Ալիք» հաստատութեան Թաւրիզի մասնաճիւղում

Ատրպատական, ազգային առաջնորդարան, Թաւրիզ- *Երկուշաբթի, փետրուարի 5-ին, ժամը 18:00-ին, հովանաւորութեամբ Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգոր արք. Չիֆթճեանի եւ Թեմական խորհրդի, «Ալիք» հաստատութեան Թաւրիզի մասնաճիւղի կենտրոնատեղիում Նայիրի Դիլանեանը դասախօսեց «Իրանի Իսլամական Յեղափոխութեան պատմական հիմքերը» նիւթով:*

Սրբազան Հօր նախագահութեամբ տեղի ունեցած սոյն դասախօսութեան ներկայ էին հաստատութեան պատասխանատու մարմինը, Թեմական խորհրդի անդամներ, գլխաւորութեամբ ատենապետ Գագիկ Ջորջեանի, 11-15 տարեկան պատանիներ ու պարմանուհիներ, նրանց ծնողները եւ հաստատութեան անդամներ:

Պատմական ամբողջ հիմքը ներկայացնելով յեղափոխութեան, Նայիրի Դիլանեանը համապարփակ բացատրական տուեց արքայական տոհմերի գործելառճին, իսկ յեղափոխութեան առաջին խմորումները համալսարանական յարկերում եւ ընդհանրապէս կրթական ոլորտում նկարագրելով, նոր սերնդի կազմաւորման քայլերը ներկայացրեց, որոնք այաթ. Խոմէյնիի կազմակերպ աշխատանքով յանգեցին արդար յեղափոխութեան:

Նա շեշտեց, որ տարածաշրջանում Իրանը միակ հզօր պետութիւնն է, որի սահմաններում թիզաչափ փոփոխութիւն չի եղել դարերով, որը բացառիկ երեւոյթ է երկրների պատմութեան մէջ: Այս ծիրից ներս Նայիրի Դիլանեանը շեշտեց, որ նման հզօր պետութեան դարաւոր հարեւանութիւնը մեր հայրենիքի՝ Հայաստանի հետ, ինքնին ապահովութիւն է. «Նման երկիր դարերով անխախտ պահպանելը միայն մէկ երաշխիք ունի. իր սեփական ուժերին հաւատալ եւ ամուր մնալ: Այն ժողովուրդները, որոնք իրենց մշակոյթից, իրենց կրօնից, իրենց պատմութիւնից կը հրաժարուեն, վստահ եղէք, որ կործանման ճանապարհը կը բռնեն»,- ասաց նա, յաւելելով, որ «Իրանը տարածաշրջանում անվտանգութիւն ապահովող մի հզօր երկիր է, որը իր դիւանագիտական խօսքը ունի ասելիք, ինչպէս նաեւ իր ասելիքն ունի ռազմական ուժով»,- եզրակացրեց նա, յուսադրելով, որ Իրանն է այսօր մեր հայրենիքի անվտանգութեան գլխաւոր երաշխիքը:

Սրբազան Հայրը փակման խօսքի

(Շար. 6-րդ էջում)

Հանդիպում Ուսանողական ֆոնդի մարմնի ներկայացուցիչների հետ

Հինգշաբթի, փետրուարի 1-ին, Թեհրանի հայոց թեմի Թեմական խորհրդի ատենապետ ճրտպ. Նորայր Արամեանը հանդիպում ունեցաւ Ուսանողական ֆոնդի մարմնի ատենապետ Ալբերտ Լազարեանի եւ ատենադպիր Արմանդ Դրօրի հետ:

Հանդիպման սկզբում ընդհանուր անդրադարձ կատարուեց ֆոնդի գործունէութեանը, մասնաւորապէս վերջին ամիսների ու ապագայ ծրագրերին:

Նշուեց, որ ուսման նպաստ ստացող մի շարք ուսանողների շրջանաւարտ լինելով, ստեղծուել է նոր ուսանողների ընդունման հնարաւորութիւն, եւ այս ուղղութեամբ խորհրդակցութեան արդիւնքում որոշուեց Ուսանողական ֆոնդի ներկայացուցիչները հանդիպում ունենան Հայ Համալսարանականների Ընդհանուր միութեան վարչութեան հետ, նաեւ 12-րդ օղակի դասարանի աշակերտ-աշակերտուհիների համար ֆոնդի գործունէութեան եւ առաքելութեան ծանօթացման հանդիպումներ կազմակերպելու նպատակով՝ խորհրդակցութիւն տեղի կունենայ Կրթական խորհրդի հետ:

Անդրադարձ կատարուեց նաեւ ուսանողներին, որպէս օժանդակութիւն տրամադրող տարեկան սակերը բարձրացնելու պայմաններին եւ հնարաւորութիւններին, որոնց կապակցութեամբ առ ի քննարկում Թեմական խորհրդին է ներկայացուելու մարմնի առաջարկութիւնները:

Հանդիպման ընթացքում Նորայր Արամեանը ընդգծեց կրթական ոլորտում ներդրում ունենալու ապագայ դրական ազդեցութիւնը եւ այս ուղղութեամբ ֆոնդի գործունէութեան կարեւորութիւնը, որի համար նշեց, որ հարկ է աշխատանքները ներկայ պայմաններին համապատասխան եւ նպատակասլաց ուղղութեամբ առաջնորդել: Նա վստահեցրեց, որ Թեմական խորհուրդն իր հնարաւորութեան սահմաններում հովանաւորելու եւ նեցուկ է հանդիսանալու աշխատանքների ընթացքի դիւրացմանն ու սահունացմանը:

«Թէյի ժամ»՝ նախաձեռնութեամբ ՀՕՄ-ի Թաւրիզի մասնաճիւղի «Տաթեւ» պարային համոյթի

Ատրպատական, ազգային առաջնորդարան, Թաւրիզ- *Հովանաւորութեամբ Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ՝ Տ. Գրիգոր արք. Չիֆթճեանի եւ Թեմական խորհրդի ու նախաձեռնութեամբ ՀՕՄ-ի Թաւրիզի մասնաճիւղի «Տաթեւ» պարային համոյթի, Իրանի Իսլամական յեղափոխութեան յաղթանակին նուիրուած ձեռնարկների շրջանակում, հինգշաբթի, փետրուարի 1-ի երեկոյեան Թաւրիզի «Հ. Ոսկանեան» սրահում տեղի ունեցաւ ճոխ սեղանով «Թէյի ժամ»: Սրբազան Հայրը բացակայում էր ծրագրից, ուրմիահայ համայնքում պաշտօնական հանդիսութեան ներկայ գտնուելու պատճառով:*

(Շար. 6-րդ էջում)

Բժշկական զննումներ «Նայիրի» եւ «Շանթ-Մարիամեան» դպրոցներում

«Ա. Աւետիսեան» ազգային բուժարանի Խնամակալ մարմնի աշխատանքների շարանում՝ Կրթական խորհրդի դիմումին ընդառաջելով, թւականիս յունուարի 10-ին եւ 28-ին «Նայիրի» եւ «Շանթ-Մարիամեան» դպրոցներում համագործակցութեամբ դոկտ. Հրաչ Խաչատրեանի կատարուեցին բժշկական զննումներ՝ առաջադրուած դասարանների համար:

Մեծապէս գնահատելի է «Ա. Աւետիսեան» ազգային բուժարանի Խնամակալ մարմնի, ինչպէս նաեւ բոլոր այն անձանց ջանքերը, ովքեր համագործակցում են նմանատիպ ծառայութիւնների իրականացման գործում:

Ազգային առաջնորդարանի
Հանրային կապի գրասենեակ

ԱՐԴԵՕՔ ԿԸ ՏԵՍՆԵ՞ՆՔ – 4

ՀԻՆԻ-ՆՈՐԻ «ՏԵՍՈՒԹԵԱՆ» ԼՈՒՍԱՒՈՐՈՂ ԾԱԼՔԵՐԸ



Երբ «Իմ Քայլ»ը իշխանութեան հասաւ, առաջին «իրագործում»-ներէն մէկը եղաւ պառակտումի նոր ալիք մը յառաջացնել երկրին մէջ: Այդ ալիքը ունեցաւ քանի մը անուանում. Մեւեր-սպիտակներ, յեղափոխականներ-հակայեղափոխականներ, ամենէն հնչեղն ու երկարաշունչ եղաւ հիներ-նորեր-ը: «Քալողներ»-ու ժառանգորդ ՔՊ-ականները (անոնցմէ շատեր «քալող» էին իրենք ցիրենք «ուսապարկ» կոչելէ առաջ) բանիւ եւ գործով հաւատարիմ մնացին այս «սկզբունք»-ին, աւելի՛ն, պառակտումի ու «նաճումներ»-ու դաշտին տիւն նոր տարածք, ազգակործան դրօշը տարածելով դէպի սփիւռքեան ափեր (սկիզբն ալ կար, սակայն յետոյ աւելի՛ խորացաւ):

Ո՛չ ոք կը ժխտէ, որ «հիներ»-ը մեղաւոր էին, երկրին ու ժողովուրդին՝ վնաս հասցուցած: Մեր այս սիւնակին նպատակը՝ «Բիւզանդական վէճ» յիշեցնող, ճիշտը սխալէն ջոկող ճախճախուտին մէջ մխրճիլ չէ, ո՛չ ալ սա կամ նա արդարացնելը կամ ամբաստանելի աթոռին նըստեցնելը: Նպատակ չունինք մանաւանդ ցանկագրելու բոլոր այն չարիքները, ահաւոր ու ՊԱՏՄԱԿԱՆ կորուստները, որոնք արձանգրուեցան թաւիշի այս վաճառականներուն ձեռքով, այլ կուզենք լուսարձակ բերել կարգ մը ծալքերու վրայ, որոնք հիմա աւելի՛ բացորոշ կերպով կը տեսնենք, ամէն օր անոնց մասին կը խօսին իրա՛ւ մասնագէտները, հայրենիքին ու ազգին ճակատագիրով մտահոգները, փրկութեան նախանձախնդիրները:

Հիմա կը տեսնենք, բայց... կը տեսնե՞նք, որ «հիներ» ըսելով՝ այս վարչախումբը ի մտի չունէր լոկ զինք կանխած իշխանական խումբերը, այլ այդ հասկացութիւնը ունի շա՛տ աւելի լայն տարածք, անպարագիծ հորիզոններ, որոնք ծալք առ ծալք կը պարզուին իրերայաջորդ օրերու, շաբաթներու եւ ամիսներու ընթացքին:

Հիմա արդեօք կը տեսնե՞նք եւ կըմբռնե՞նք, որ «հիներ»-ու ցանկին են, Հայաստանի վերանկախացման օրերուն, Սահմանադրութիւն եւ անոր ազգապահպան-հողապաշտպան նախաբանը մշակողները, Արարատին, Արցախին ու Արեւմըտեան Հայաստանին տիրութիւն ընողները: Կը տեսնե՞նք, որ «հիներ» են եղեր մեր պատմութեան՝ իրա՛ւ պատմութեան ուսանողներն ու դասախօս-ուսուցիչները, պատմագիրներն ու պատմաբանները: Եթէ փորձենք հետեւիլ այս անտրամաբանութեան, կը հասնինք հոն, ուր հիներու ցանկին կարձանագրուին Սեւակներն ու Թումանեան, Իսահակեան ու Չարենց (փակագիծի մէջ՝ նաեւ Պարոնեան եւ սերընդակիցներ, Ազգային Սահմանադրութիւնը մշակողներ), ինչո՞ւ չէ՝ Խրիմեան Հայրիկը, ազգային կուսակցութեանց հիմնադիրները եւ անոնց բացած ուղիները ընդարձակողները. ետ երթալով՝ կը հասնինք մինչեւ Աբովեան, Դաւիթ Բէկ, Մխիթար Սպարապետ, Իսրայէլ Օրի ու մեր բոլոր պատմագիրները, անոնց ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ մէջ տեղ գրաւած արքաները, իշխաններն ու ազգ-հայրենիք այլ պահպանողները, եկեղեցւոյ ազգաւէր ու ազգապաշտպան ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԿԵՐՏՈՂՆԵՐԸ:

«Հիներ»-ու ցուցակը կրնանք հարստացնել մեր ազատամարտիկներով ու նահատակներով, Յեղասպանութեան զոհերով ու ֆեդայիներով, «ադրբէջանական հողերու վրայ» Հայաստանի Հանրապետութիւն արարողներով: Եւ նոյն թռիչքներով՝ կրնանք հասնիլ մինչեւ... Հայկ Նահապետ ու յետնորդներ, որովհետեւ հիմա ադրբէջանցիները նոր «պեղումներ» կընեն (եղեր), փաստելու, որ Բէլը... թուրք-ադրբէջանցի էր:

«Հիներ»-ու ցանկին են եղեր «հայդատական»-ները, որոնք Հայաստանի քարտէզը կը տեսնեն ՄԻԱՅԵԱԼ ԵՒ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ հայրենիքի տարածքով, ցեղասպան թուրքին կը ներկայանան իբրեւ պահանջատէր (իսկ նորերը «որեւէ մէկէն հողային պահանջ չունինք» կը յոխորտան), կը մերժեն խաղալիք դառնալ միջազգային այս կամ այն (իբրեւ թէ) օրէնքի պարտադրանքներուն, որոնք կը փորձեն, ի շարս այլ իրաւազրկեալներու՝ մեր կոկորդէն վար հրել այն, որ «ճանչցուած սահմանները անփոփոխելի են» (իսկ ո՞ր դասակարգին մէջ են անոնք, որոնք ճանչցուած սահմանները կը բռնաբարեն, դրացիներէ հողեր կը խլեն եւ... քաջալերանք կը գտնեն): «Հիներ»-ն են եղեր, որ բարձր կը պահէին Արդարութեան եւ Պահանջատիրութեան դրօշը (եւ անոնք հաւասարապէս «ռեւանշիստ» կը կոչին թէ՛ Երեւանի, եւ թէ՛ թուրք-ադրբէջանական ճակատին կողմէ): Այդ «հիներ»-ուն տեղը հիմա Երեւանի ու Բաքուի բանտերն են:

Շարունակենք. «հիներ»-ուն մեղքերուն շարքին են մեր մշակոյթի պահպանման նախանձախնդրութիւնը, եկեղեցւոյ նման ազգային հաստատութեանց պաշտպանութիւնը: Չարամիտ եւ ռազմատենչ «հիներ»-ն են, որ կը մերժեն հողային եւ այլ զիջումներ կատարել Ադրբէջանին:

«Հիներ»-ն են, որ կը կրկնեն ու կը կրկնեն, թէ Արցախը տալով՝ խաղաղութիւն պիտի չունենանք, աւելին, թուրք-ադրբէջանցին ախորժակին դիմաց արգելքները մեր ձեռքով պիտի վերցնենք...

Այլ տարածքնե՞ր կուզէք. խընդրե՛մ. «հիներ»-ն են, որ կը մերժեն քոչւոր ադրբէջանցիներուն Հայաստան վերադարձը: «Հիներ»-ն են, որ կը յիշեցնեն, թէ Արցախէն վերջին բռնագաղթը եւ ցեղասպանութեան համազօր ոճիրները միայն նորագոյն օղակներն էին տասնամեակներու վրայ երկարած ոճիրներու, որոնց նախերգանքը հնչած էր անցեալ դարասկիզբին, Շուշիի ջարդերով եւ հրկիզումով, ապա շարունակուած՝ Լ.ԴԻՄ-ի հանդէպ Բաքուի խտրական վարքագիծով: Նո՛յն «հիներ»-ն են, որ կը յիշեցնեն, թէ երբ կը խօսինք 100 հազար կամ քիչ մը աւելի բռնագաղթած հայերու մասին, մենք իսկ լուսանցքի վրայ կը ձգենք հսկայական զանգուածներ, կը մոռնանք, որ վերջին բռնագաղթէն երեք տարի առաջ, Արցախի գրաւեալ շրջանէն շուրջ 100000 հայ փախուստ տուած էր, յետոյ անոնց մեծ մասը վերադարձած էր չգրաւուած հողերուն, սակայն աւելի քան 30 հազար գաղթական մնացած էր Հայաստան: Ինչո՞ւ մոռնալ Արցախեան առաջին պատերազմի օրերուն բռնագաղթածները՝ Գետաշէնէն, Շահումեանէն, իսկ անկէ կարճ ատեն առաջ՝ նոյնինքն Բաքուէն: Ո՞վ արձանագրած է բոլոր բռնագաղթածներուն ընդհանուր թիւը, եւ բացի «հիներ»-էն, ո՞վ է, որ երբեմն կը յիշեցնէ մեր Դատին այդ երեսը:

Եւ հիմա, երբ Ադրբէջան կը պընդէ, որ Հայաստանէն ու Արցախէն «բռնագաղթած» ադրբէջանցիները պէտք է վերադառնան «իրենց հողերը», նոյն այն «հիներ»-ուն ճիտին պարտքն է հաւաքագրել մեր Դատին այս մասնիկը եղող փաստերն ու հետապնդել զայն:

***

Կայ հինի-նորի քարոզչութեան (եւ անոր՝ ի վնաս Հայաստանին ու ազգին շահագործման) սնանկութեան մէկ այլ երեսը, որ ընդհանրապէս կը վրիպի մեր քննարկումներէն:

Հարց տանք. արդեօք միայն Հայաստանի՞ մէջ է, որ կան հին ու նոր իշխանաւորներ: Ի՞նչ պիտի պատահէր աշխարհին, ՄԱԿ-ը կազմող աւելի քան 200 երկիրներուն, եթէ հիներուն հանդէպ մի այն մերժողական կեցուածք ունեցող նորերը փորձէին յաւերժացնել իրենց իշխանութիւնը...

ԲՆԱԿԱՆ, տրամաբանութեամբ շարժող երկիրներու մէջ (Հայաստանը, տեսնե՛նք, որ անբնական վիճակի մատնուած է), որոշ կուսակցութիւններ կը պայքարին առանձինն կամ այլոց հետ ճակատ կազմելով, իշխանութեան կը հասնին ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ կիրարկումով, քանի մը տարի ետք կը ձախողին, մրցակիցներ կը փոխարինեն զանոնք, իսկ ճգնաժամային պահերու (դուք ձեզի հարցուցէք, թէ Հայաստան վերջին տարիներուն քանի՞ ճգնաժամէ անցաւ), ամենէն ոխերիմ հակառակորդներն անգամ կը գտնեն գործակցութեան եզրեր, որպէսզի ԵՐԿԻՐԸ ՓՐԿԵՆ այս կամ այն վտանգէն (տնտեսական, արտաքին սպառնալիք եւ այլն): Եւ սա քաղաքական կեանքի ԲՆԱԿԱՆ զարգացման մաս կը կազմէ, որքան ալ որ խոցելի բաներ ունենան որոշ կուսակցութիւններ: (Կուսակցութիւնները անհատներով չեն պայմանաւորուիր):

Կրնանք բազմաթիւ օրինակներ ցանկագրել: Երեւակայեցէք, որ Միացեալ Նահանգներու մէջ, Թրամփի պէս ապիկար մը եւ կործանարար մը «հին» չի նկատուիր այն մտայնութեամբ, որ տիրող է նիկոլական Հայաստանին մէջ: Հակառակ դատարաններու մէջ արձանագրուած անժխտելի յանցանքներուն՝ Թրամփ մը հիմա դարձեալ աչքերը տնկած է Սպիտակ տան աթոռին (չմտնենք քաղաքական խաղերու ոլորապտոյտին մէջ): Նոյն բնական մրցակցութիւնները կիրականանան Ֆրանսիայի, Անգլիոյ, Գերմանիոյ, Իտալիոյ, մինչեւ իսկ հարաւամերիկեան, աֆրիկեան ու ասիական բազմաթիւ երկիրներու մէջ: Հոն, մարդիկ իշխանութիւնը կը դիտեն իբրեւ ԵՐԿՐԻ ՀԱՐՑԵՐԸ ՅԱՆՁԱՆՁՈՂ, եւ ո՛չ թէ գրպան լեցնողներու եւ պարգեւավճարներ շռայլողներու խըմբակ: Ամէն տեղ ալ (ի մտի չունինք մենատիրական երկիրները) իշխանաւորները քիչ թէ շատ կը խաղան կամայական կերպով, սակայն կան կարմիր գիծեր, իսկա՛ւ կարմիր գիծեր, որոնց խախտումը արդար պոռթկումի, մինչեւ իսկ պայթումի կը հասցնէ պահանջատէր զանգուածը:

Մէկ խօսքով, երկիրն ու ազգը պառակտող սնանկ «տեսութիւնները» պէտք է չքանան անյապաղ: Երկրի փրկութեան նախանձախընդիր, նման առաքելութիւն իրագործելու ատակ մարդոց՝ մասնագէտ ու գիտակ հայրենասէրներու ճիտին պարտքն է (ի շարս այլ բաներու) բանալ ժողովուրդին աչքերը, հասկըցնել, որ այս իշխանաւորները մեզ հասցուցած են այնպիսի՛ ահաւոր վիճակի, որմէ դուրս գալու, փրկուելու համար պէտք է միացնել ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԲՈԼՈՐ ԱՏԱԿ ՁԵՌՔԵՐԸ, տեսնել, թէ ամենէն անբնական վիճակներուն մէջ, իսկ կայ գլխագիր ԲՆԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ մը, որ աւելի քան հինգ տարիէ ի վեր խախտած է Հայաստանի մէջ, պէտք է վերագրտնել ու վերականգնել այդ ուղին:

Ս. ՄԱՀՍԷՐԷՃԵԱՆ

27-29 յունուարի 2024

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

2023-2027 քառամեակի ՀՄԸՄ-ի Կենտրոնական վարչութեան առաջին լիագումար նիստերը տեղի ունեցան 25-27 յունուարի 2024-ին, Ալմելո, Նեդերլանդներ:

Պատգամաւորական 14-րդ Ընդհանուր ժողովի որոշումներու լոյսին տակ, Կենտրոնական վարչութիւնը մշակեց քառամեայ իր գործունէութեան ընդհանուր ուղղութիւնները՝ կարեւորութեամբ ընդգծելով հետեւեալները.-

ա) Արցախը ներկայ հանգրւանին ՀՄԸՄ-ի աշխատանքներուն մէջ ունի առանցքային տեղ: ՀՄԸՄ-ի Արցախի Մեկուսի շրջանը այսօր գործունէութիւնը կը շարունակէ Հայաստանի մէջ, կայք ունենալով ՀՄԸՄ-ՀԱՄԿ-ի Երեւանի կենտրոնը՝ մինչեւ պատմական վերադարձ իր ակունքներուն: Հարկ է յատուկ ուշադրութեան արժանացնել Արցախի մասնաճիւղը: ՀՄԸՄ-ի աշխարհասփիւռ մասնաճիւղերը պարտականութիւնը ունին «ՀՄԸՄ-ի Արցախ հիմնադրամ»-ին ճամբով աջակցելու Հայաստան հաստատուած արցախցիներու օժանդակութեան ծրագիրներուն:

Արցախի գծով, լիագումարը որդեգրեց յատուկ նշանակ մը, որ այսուհետեւ իրենց տարազներուն վրայ պիտի կրեն ՀՄԸՄ-ական բոլոր սկաւտներն ու մարզիկները:

բ) Լիագումարը հաստատեց, որ ՀՄԸՄ-ի կենսունակութեան աղբիւրներէն մէկը երիտասարդութիւնն է, ի մասնաւորի 18-35 տարիքի այն միութենականները, որոնք սկաւտական եւ մարզական տարիներուն հրաժեշտ տալէ ետք, բեղուն եւ ներգործօն մարդուժ են իրենց գաղութներէն ներս վարչական-կազմակերպչական աշխատանքներու համար: Սոյն նպատակով, Կենտրոնական վարչութիւնը որոշեց միութեան սկաւտական եւ մարզական ճիւղերու կողքին հաստատել կազմակերպ Երիտասարդական ճիւղ:

ՀՄԸՄ պարտի երիտասարդական իր ճիւղով մշակել ծրագիրներ՝ կարենալ համախմբելու համար միութենական քոյրեր-եղբայրներ եւ զանազան պատճառներով հայ իրականութենէն հեռացած նոր սերունդի անդամներ, իրենց ներդրումը ունենալու հայ իրականութեան մէջ գիտակցելով, որ Սփիւռքի մաշեցնող իրականութեան դէմ յանդիման, ՀՄԸՄ-ը իբրեւ երիտասարդութեան ամենէն աշխոյժ եւ կազմակերպ միութիւնը, պարտաւորութիւնը ունի ազգային արժեհամակարգի հիմերու ամուր պահպանման ի մասնաւորի երիտասարդ սերունդի մօտ:

գ) Սկաւտական եւ մարզական աշխատանքներու պարագային, լիագումարը անհրաժեշտ գտաւ կենտրոնանալ ՀՄԸՄ-ի համագաղութային կառոյցի հզօրութեան աշխատանքին վրայ: Ինչպէս նաեւ համա-ՀՄԸՄ-ական քառամեայ ձեռնարկներու կողքին, թափ տալ ցամաքամասային նախաձեռնութիւններու, շրջանները աւելի աշխուժացնելու, փոխադարձ կապերը սերտացնելու եւ երկու տարին անգամ մը նոյն ցամաքամասի սկաւտներն ու մարզիկները իրարու քով բերելու համար:

դ) Միութենական քարոզչութեան մարզը իր տպագիր, բանաւոր եւ էլեկտրոնային տարբերակներով արժանացաւ լիագումարի բազմակողմանի քննարկման եւ անհրաժեշտ նկատուեցաւ յատուկ աշխատանք տանիլ ժամանակակից երիտասարդութեան ակնկալութիւնները գոհացնող եւ միութեան ընդհանրական դիմագիծը ներկայացնող քարոզչական համակարգ մը ունենալու:

է) Միութեան կառուցային հզօրացման նպատակով, լիագումարը անդրադարձաւ նաեւ ՀՄԸՄ-ի տեղեկութիւններու շտեմարանի (Data base-ի) աշխատանքներուն եւ այդ ճամբով աշխարհասփիւռ ՀՄԸՄականները իրարու կապելու առաջադրանքին:

զ) Լիագումարը հաստատեց ՀՄԸՄ-ի տնտեսական հզօրացման պարտաւորութիւնը եւ առ այդ շարք մը որոշումներ տուաւ միութեան ֆոնտերուն աշխուժացման եւ տընտեսական ծրագիրներուն իրականացման համար:

է) Վերջին տարիներուն ՀՄԸՄ դրական փորձառութիւն ունեցաւ «Հրաշք» ծրագիրին իրագործումով: Յատուկ խնամքի կարօտ պատանի-պարմանուհիներ ՀՄԸՄ-ի «Հրաշք»-ին շնորհիւ առիթը ունեցան Մ. Նահանգներու եւ Հայաստանի մէջ խաղերու իրենց մասնակցութիւնը բերել: Այս քառամեակին ճիգ պիտի կատարուի «Հրաշք»-ի փորձառութիւնը կիրարկելու ՀՄԸՄական այլ շրջաններու մէջ եւս, հոն ուր համապատասխան կարելիութիւններ գոյութիւն ունին:

Եռօրեայ լիագումար նիստերու առընթեր, ՀՄԸՄ-ի Կենտրոնական վարչութիւնը հանդիպումներ ունեցաւ Նիդերլանդներու ՀՄԸՄ-ի երեք Մեկուսի շրջաններու՝ Ալմելոյի, Առնհէմի եւ Ալքմարի վարչութիւններուն հետ, նաեւ ներկայ գտնուեցաւ Ալմելոյի եւ Առնհէմի վարչութիւններուն՝ վաստակաւոր ՀՄԸՄականներու պարգեւատրման ձեռնարկներուն:

2023-2027 քառամեակի առաջին լիագումարը նշեց ՀՄԸՄ-ի 14-րդ Կենտրոնական վարչութեան աշխատանքներուն մեկնարկը՝ հայ կեանքի ամենէն բարդ եւ պատասխանատու այս հանգրւանին, մշակուած ծրագրերու յաջողութեան համար հրամայական նկատելով ՀՄԸՄ-ական կարելիութիւններու ամբողջական լարումը՝ ի սպաս հայ երիտասարդութեան համախմբման, ի խնդիր հայութեան եւ Հայաստանին անմնացորդ ծառայութեան:

ՀՄԸՄ-Ի
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Նայիրի Յոխիկեան.

«Կասկած կայ, որ գուցէ Մեղրին ու Վարդենիսը եւս Նիկոլը ուզում է գործարքով պատերազմով յանձնել թշնամուն»

Նայիրի Յոխիկեանը «Ֆէյսբուք»-եան իր էջում գրել է.

«Վարդենիսի ու Մեղրիի պետական հիմնարկների փակման մասին.

Վերջին շաբաթներին մեր հանրութեան մէջ անհանգիստ խօսակցութիւններ են տարածւում սկզբում Մեղրիի, ապա արդէն նաեւ Վարդենիսի մի շարք պետական կառոյցների փակման/տեղափոխման մասին:

Խօսքը այս պահին առաւելապէս Անձնագրային բաժինների, ԶԱԳՍ-ի, Կադաստրի, Արխիւի մասին է, նախատեսւում է այլ պետական կառոյցներ եւս փակել եւ տեղափոխել հարեւան համայնքներ:

Մարդիկ անհանգստացած են յատկապէս նրա համար, որ Վարդենիսն ու Մեղրին 2020-ի պայմանաւորուած պատերազմից ու Արցախի գործարքով յանձնելուց յետոյ դարձել են սահմանային բնակավայրեր, փտանգած է մարդկանց կեանքը, եւ հիմա այդ տարածքներից հանելով պետական հիմնարկները՝ մարդկանց մօտ կասկած կայ, որ գուցէ Մեղրին ու Վարդենիսը եւս Նիկոլը ուզում է գործարքով պատերազմով յանձնել թշնամուն:

Ժողովուրդը հաւաքական առումով չի սխալւում, բայց այս ամենի մէջ կայ մէկ խնդիր, որի մասին չեն խօսում:

Ես խօսեմ:

Հայաստանի 2024 թ. պետական բիւջէն ունենալու է անկախութիւնից յետոյ, թերեւս, ամենամեծ բացը՝ մօտ 1.2 մլրդ. դոլար (482.9 մլրդ. դրամ): Բիւջէի այդպիսի ահռելի ճեղքւածք առաջացել է յատկապէս նրա համար, որ ՔՊ-ի պաշտօնեաները աջ ու ձախ գռփել են պետական փողերը, պարգեւավճարներով հարստացել:

2024-ի բիւջէի այդ պակասուրդը ֆինանսաւորելու համար նախատեսւում է արտաքին վարկերի գծով կատարել 315.0 մլրդ. դրամի (782.9 մլն. դոլար) մասհանումներ: Ընդ որում, 132.8 մլրդ. դրամը (330.1 մլն. դոլար) նախատեսւում է կատարել նպատակային վարկային ծրագրերի գծով, իսկ մնացած 182.2 մլրդ. դրամը (452.7 մլն. դոլար)՝ բիւջէտային աջակցութեան վարկերի գծով: Այսինքն՝ դրսից վարկեր են վերցնում, որ պետական աշխատողների աշխատավարձերը կարողանան տալ:

Իսկ ո՞վ ուտի, թալանի բիւջէի փողերը, եթէ պետական աշխատողներին Նիկոլը շարունակի կայուն աշխատավարձ տալ, թէկուզ դրսից վերցրած ու մեզ՝ բոլորիս ուսերին մնացած արտաքին պարտքի հաշւին: Այ հէնց սրա համար էլ գործի է անցել ՕՊՏԻՄԱԼԱՅՈՒՄ կոչւած երեւոյթը:

Նիկոլն ասում է՝ ի՞նչ պարտադիր է, որ Վարդենիսում ու Մեղրիում անձնագրային բաժին կամ կադաստր լինի, թող մարդիկ գնան միւս համայնքներում սպասարկւեն: Երեւանում նստած Նիկոլի ու ՔՊ-ի միւս մանկլաւիկների համար հեռաւոր, սահմանային բնակավայրերը չեն կարող ուշադրութեան կենտրոնում լինել, հետեւաբար նրանք այսօր այլեւս նպատակ չունեն փող ծախսել Վարդենիսի ու Մեղրիի վրայ, վաղը՝ Մարտունու, Կապանի, Նոյեմբերեանի... եւ այդպէս շարունակ:

Հանրային պաշտօն զբաղեցնող 20 հազար 159 աշխատողներից արդէն սկսել են կրճատումները: Շուտով մարդիկ կը ստանան աշխատանքից ազատւելու լայնամասշտաբ ծանուցագրեր»:

Փաշինեանը Զինւած ուժերից պահանջում է խախտել օրէնքը, Ալիեւին տալիս լեգիտիմ իրաւունք մեղադրանքներ առաջադրելու

Փաշինեանի վտանգաւոր թէզերը



Նիկոլ Փաշինեանը Հայաստանի հանրային ռադիոյի «Անվտանգային միջավայր» հաղորդման շրջանակում տւած հարցազրոյցում բանակին ու անվտանգային հարցերին առնչող բազմաթիւ անտրամաբանական ու անհեթեթ մտքեր ու ձեւակերպումներ է թոյլ տուել, կար նաեւ վտանգաւոր բառակոյտ:

Նիկոլ Փաշինեանի յայտարարութիւններն ու շարադրանքը մեկնաբանելը վաղուց դարձել է անշնորհակալ գործ, ամէն դէպքում, որոշ մտքեր կէտ առ կէտ կառանձնացնենք, որոնք, թերեւս, առաջին անգամ էին հնչում:

Առաջին, Փաշինեանն ասում է, որ բանակի կառուցման կոնտեքստում շատ կարեւոր է ունենալ լեգիտիմ նպատակներ: Այլ կերպ, ըստ փաշինեանական տրամաբանութեան, այսուհետ բանակը պիտի իր առջեւ լեգիտիմ խնդիրներ դնի, այսինքն՝ մինչ այս ոչ լեգիտիմ խնդիրներ է լուծել:

«Տեսէք, նախ մենք ընդգծում ենք, եւ իւրաքանչիւր երկրի լեգիտիմ իրաւունքն է ունենալ ուժեղ եւ մարտունակ բանակ: Բայց այս հարցը հետագայ քննարկման անհրաժեշտութիւն եւ կարիք ունի, որովհետեւ եթէ դու ուժեղ եւ մարտունակ բանակ ունես լեգիտիմ նպատակներ իրագործելու համար, ոչ մէկը քեզ չի կարող ասել՝ ինչո՞ւ ես դու քո բանակն ուժեղացնում: Եթէ դու խնդիր ես դնում նպատակ, որի լեգիտիմութիւնն արտաքին միջավայրի եւ միջազգայնօրէն կարող է դրւել կասկածի տակ, այստեղ առաջանում են բազմաթիւ խնդիրներ:

Աթոռն ու կաշին կորցնելու վախը. ինչու է ներիշխանական գզւռտոց սկսւել

Ներիշխանական գզւռտոցի հիմնական պատճառը վախն է: Բոլորը վախենում են, բայց տարբեր պատճառներով: Մէկը վախենում է կորցնել իշխանութիւնն ու ընկնել Սահակաշւիլու օրը: Միւսը վախենում է դատւել: Երրորդը վախենում է կորցնել այս կարճ ժամանակահատւածում կուտակած հսկայական կապիտալը:

Աթոռն ու կաշին կորցնելու վախը

Նիկոլ Փաշինեանը վերջին շրջանում ակտիւ շփւում է թիմակիցների հետ, այցելում կուսակցական կառոյցներ: Նա փորձում է վերահսկողութեան տակ պահել ՔՊ-ականներին, որպէսզի իր տակից չփախչեն:

Նիկոլը խոստովանում է, որ Ալիեւի հետ բանակցութիւնները ձախողւել են, բայց նաեւ զուգահեռաբար Ալիեւի թելադրած օրակարգն է սպասարկում: Անցել է ՀՀ Անկախութեան Հռչակագիրը վերացնելուն: Ալիեւը պահանջում է նոր Սահմանադրութիւն ընդունել, Նիկոլը պատրաստակամութիւն է յայտնում բաւարարել այդ պահանջը:

Նիկոլը լաւ գիտի, որ իր արածները նոր պատերազմ ու նոր կորուստներ են բերելու: Գիտի, որ ոչ մի խաղաղութիւն չի լինելու միակողմանի զիջումների արդիւնքում, բայց գնում է այդ ուղղութեամբ, քանզի իր դրսի տէրերն անձամբ իրեն միայն այդ դէպքում են անձնական անվտանգութիւն խոստանում:

Նիկոլն իր կաշւի մասին է մտածում: Նաեւ հասկանում է, որ իր թիմակիցները կարող են դա ֆիքսել ու իրեն վռնդել: Դրա համար էլ յարձակւել է իւրայինների վրայ:

«Թաւիշ»-ը խժռում է իր զաւակներին

Նիկոլի թիմակիցները հասկանում են, որ Նիկոլի վարած քաղաքականութիւնը տանում է Հայաստանը դէպի կործանում: Իրենք գիտեն, որ մեծ ցնցումներ են սպասւում: Գիտեն նաեւ, որ նման դէպքերում Նիկոլն իր կողքիններին «փուռն» է տալիս ու թռնում: Հէնց դրանից էլ վախենում են Նիկոլի թիմակիցները: Նրանք երեկւայ աղքատ ու «բոմժական» տղաներն ու աղջիկները չեն: Իշխանափոխութիւնից յետոյ «թաւշիկուսները» դարձել են դոլարային միլիոնատէրեր ու վախենում են իրենց կուտակածը կորցնել: Վախենում են նաեւ նիկոլական իշխանութեան քաւութեան նոխազը դառնալու հեռանկարից: Վախենում են ու իրար ուտում:

Եւ այսպէս, Նիկոլը վախենում է թիմակիցներից: Վերջիններս՝ Նիկոլից: Նրանց յարաբերութիւնները փոխադարձաբար սրիկայական են: Նիկոլն ասում է՝ ես եմ ձեզ բերել, ես էլ «փուռը» կը տամ՝ յանուն իմ կաշւի փրկութեան: Թիմակիցներն էլ ասում են՝ քո կերածների համար մենք ինչո՞ւ պէտք է պատասխան տանք ու կապիտալ կորցնենք:

Թէ ինչպէս կը հանգուցալուծւի այս ներքին գզւռտոցը, կախւած է արտաքին գործօններից ու ներքաղաքական զարգացումներից: Նիկոլը զուգահեռաբար կռիւ է տալիս նաեւ ընդդիմութեան դէմ. «Մայր Հայաստան»-ի դէմ յարձակումները պատահական չեն:

«Մայր Հայաստան»-ը ներքին ու արտաքին քաղաքական հարցերում արմատական ընդդիմութիւն է Նիկոլ Փաշինեանին ու չի տեղաւորւում նախկին-ներկայ արհեստական բանավէճի մէջ, ու հէնց դրանով էլ անցանկալի է ՔՊ-ի համար:

Ամփոփենք. փետրւարը միշտ քաղաքականապէս լարւած է լինում Հայաստանում: Այս տարւայ փետրւարը բացառութիւն չէ:

7or.am

«Թէյի ժամ»...

(Շար. 4-րդ էջից)

Ծրագրին ներկայ էին թեմի Պատգամաւորական ժողովի ատենապետուհի՝ Արմինէ Վահրամեանը, ժողովի անդամ՝ Արմոնդ Բաղալեանը, Թեմական խորհրդի ատենապետ՝ Գագիկ Ջորջեանն ու խորհրդի անդամ Քաթրին Դիլանեանը, ՀՕՄ-ի Թաւրիզի մասնաճիւղի վարչութեան անդամները, միութեան երէց անդամուհիներ եւ աւելի քան 130 թաւրիզահայեր:

Միջոցառման ողջոյնի խօսքով արտայայտւեց ՀՕՄ-ի Թաւրիզի մասնաճիւղի «Տաթեւ» պարային համոյթի կազմակերպական աշխատանքների պատասխանատու՝ Նայիրի Դիլանեանը: Նա ներկաներին շնորհաւորեց Իրանի Իսլամական յեղափոխութեան յաղթանակի տարեդարձը եւ անդրադարձաւ Իրանի Իսլամական Հանրապետութեան հովանու ներքոյ հայ համայնքի կրօնական, մշակութային եւ ազգային-հասարակական կեանքի լայն հնարաւորութիւններին, որոնց շնորհիւ իրանահայ համայնքը համարւում է Սփիւռքի ամենակազմակերպւած համայնքներից մէկը: Նա մասնաւորապէս անդրադարձաւ Իրան հայրենիքի հզօրութեանը եւ դրա մեծ դերակատարութեանը տարածաշրջանային անվրտանգութեան ապահովման հարցում:

Օրւայ առիթով խօսքն յանձնւեց Պատգամաւորական ժողովի ատենապետուհի՝ Արմինէ Վահրամեանին, որ իր հերթին բարձր գնահատեց կազմակերպւած ծրագիրն, որն ի մի էր բերել թաւրիզահայ համայնքի մեծ թւով անդամներին: Արմինէ Վահրամեանը շնորհաւորեց բոլորին Իրանի Իսլամական Յեղափոխութեան յաղթանակի տասնօրեակի առիթով եւ անդրադարձաւ սփիւռքեան պայմաններում ապրող հայկական համայնքների հայի նկարագրի պահպանման կարեւորութեանը: Նա մատնանշելով ամբողջ աշխարհում տիրող ծանր պայմաններին՝ կապւած տնտեսական ոլորտին եւ դրանցից բխող թանկացումներին, բարձր գնահատեց մեր համայնքի անդամների մասնակցութիւնն ու ներդրումը համայնքից ներս աշխատող բոլոր միութիւնների, կրթական կառոյցների եւ կազմակերպութիւնների միջոցառումներին, շեշտելով, որ այդ կառոյցների պահպանումը համայնաքային պարտականութիւն է, քանի որ այդ կառոյցները համայնքի աշխոյժ կեանքն են ապահովում, իսկ աշխատանքները կեանքի կոչելու համար մեծ զոհողութիւններ են պահանջւում դրանք ղեկավարող անձանց կողմից, իսկ այդ բոլորը հնարաւոր է միայն հային յատուկ ուժեղ եւ անկոտրում կամքի դրսեւորմամբ:

Արմինէ Վահրամեանը բարձր գնահատեց «Տաթեւ» պարային համոյթի գեղարւեստական ղեկավար՝ Կարինէ Մանուչերեանի հետեւողականութիւնն ու նւիրւածութիւնը, համոյթը 10 տարիներ ղեկավարելու եւ այն գործունեայ պահելու առիթով, դրա կողքին գնահատելով նաեւ Նայիրի Դիլանեանին նոյն պարային համոյթի աշխատանքները կազմակերպելու համար:

Այդ միջոցառման ընթացքում պարգեւատրւեցին ՀՕՄ-ի Թաւրիզի մասնաճիւղի «Տաթեւ» պարային համոյթի անդամներ՝ Շաղիկ Գէորգեանը, Ալինա Նաւասարդեանը, Վրէժ Գրիգորեանն ու Սեւան Թարվերդեանը, որոնք ընդունւել էին գերլիսանսի մակարդակում իրենց համալսարանական կրթութիւնը շարունակելու համար: Նշեալներին յիշատակի նւէրները յանձնւեցին Պատգամաւորական ժողովի ատենապետուհի՝ Արմինէ Վահրամեանի, Թեմական խորհրդի ատենապետ՝ Գագիկ Ջորջեանի եւ ՀՕՄ-ի Թաւրիզի մասնաճիւղի նախագահուհի՝ Անահիտ Մարգարեանի միջոցով, իսկ օրւայ առիթով նկատի առնւած վիճակախաղը շահեց Արմինէ Վահրամեանը:

Աւելի քան երեք ժամ տեւած սոյն միջոցառման ընթացքում ճոխ սեղանների շուրջ համախմբւած ներկաները հիւրասիրւեցին ՀՕՄ-ի Թաւրիզի մասնաճիւղի «Տաթեւ» պարային համոյթի անդամ-անդամուհիների կողմից, որոնք ներկաներին հրամցրեցին հայկական սեղաններին յատուկ անուշահամ խմորեղէններ եւ ուտեստներ, որոնք պատրաստել էին համոյթի անդամուհիների եւ ծնողական յանձնախմբի միջոցով:

Հայկական երաժշտութիւնը ուրախ մթնոլորտ էր ստեղծել սրահում, իսկ հայկական շուրջպարը աւելիով զարկ տւեց այդ ուրախ մթնոլորտին:

Ներկաները սրահը թողեցին ՀՕՄ-ի Թաւրիզի մասնաճիւղի «Տաթեւ» պարային համոյթի մի նոր միջոցառմանն մասնակից լինելու բուռն ցանկութեամբ:

Յեղափոխութեան...

(Շար.4-րդ էջից)

հրաւիրւելով, նախ իր բարձր գնահատանքը յայտնեց «Ալիք» հաստատութեան Թաւրիզի մասնաճիւղի վարչութեան եւ պատասխանատուներին, որոնք սոյն առիթը ընձեռել էին համայնքին, յատկապէս նոր սերնդի առողջ կազմաւորման նպաստելու: Սրբազան Հայրը գնահատեց նաեւ Նայիրի Դիլանեանին, որը Իրանի հազարամեակների պատմութեան խորքից անցնելով, համապարփակ ներկայացրեց դրա անցեալը, Յեղափոխութեան հիմունքը, ինչպէս նաեւ հասարակական արդարութեան հոլովոյթը այս երկրում:

Սրբազան Հայրն իր խօսքի առանցքը դարձրեց «կամք» բառը, որը 45 տարիներ առաջ դրսեւորւեց իրանցի ժողովրդի մեծամասնութեան կողմից, եւ մինչեւ այսօր, հակառակ այս երկիրը շրջապատող բազմապիսի դժարութիւնների, շրջափակման եւ տնտեսական ճգնաժամի, շարունակում է առանցքը հանդիսանալ ժողովրդի կեանքին ու հաւաքական առաքելութեան:

Դասախօսական ծրագրի աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որի ընթացքում շարունակւեց մտերմիկ զրոյցը՝ Սրբազան Հօր եւ օրւայ դասախօսի հետ:

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ԱՌԻԹՈՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆԾԱՅՈՒՄ

Այսու Թեհրանի մեր հաւատացեալ ժողովրդի զաւակներին յայտնում ենք, որ **չորեքշաբթի, փետրուարի 14-ին, 2024 թ. Տեառնընդառաջ է, այսինքը՝ Տօն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի տաճարն:**

Այս առիթով՝ երեքշաբթի, փետրուարի 13-ին, ժամը 16:00-ին, Թեհրանի մեր բոլոր եկեղեցիներում կատարուելու է Տեառնընդառաջի հանդիսաւոր նախատօնակ:

Տեառնընդառաջի տօնը տօնն է նաեւ **ՀԱՅ ՄԱՆԿԱՆ**. այսու մեր սիրելի ծնողներին կոչ ենք ուղղում, որ իրենց նորածին երեխաներին այդ օրը՝ երեքշաբթի, փետրուարի 13-ի երեկոյեան եկեղեցի բերեն, որպէսզի յընթացս եկեղեցական արարողութեան՝ նորածինների տաճարը ընծայման խորհրդաւոր կարգն ընդունեն:

Յայտնենք, որ Ս. Սարգիս առաջնորդանիստ մայր եկեղեցում կրօնական արարողութեանց նախագահելու եւ իր պատգամը փոխանցելու է Թեհրանի հայոց թեմի առաջնորդ

ԳԵՐՇ. Տ. ՍԵՊՈՒՀ Ս. ԱՐՔ. ՍԱՐԳՍԵԱՆԸ

Մեր հաւատացեալ ժողովրդին հրաւիրում ենք՝ ներկայ լինելու վերոյիշեալ արարողութեանը եւ հաղորդուելու Տեառնընդառաջի խորհրդով:

Այս առիթով մեր միութիւններին, կազմակերպութիւններին եւ ծնողական խորհուրդներին թելադրում ենք, որ **Տեառնընդառաջի** առիթով ինչպէս եկեղեցում, նոյնպէս միութիւններում եւ դպրոցներում կազմակերպեն աւանդական հրավառութիւն, հայավայել եւ քրիստոնէավայել կերպով, այնպէս, ինչպէս մեր հայրերն էին այն տօնում, միաժամանակ բացատրելով տօնի հետ կապած հրավառութեան իմաստը:

ԴԻՒԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

Իրանում ....

(Շար. 2-րդ էջից)

իրեն այսպէս կոչած «Հարաւային Ադրբէջանի» ազգային ակտիւիստ կոչած թուրքախօս գործակալ Սուրգուն Գունեշը:

Գործակալը յաւելել է, որ հաւանաբար այս ձերբակալութիւններն ի պատասխան Բաքուում ձերբակալուած իրանցի «լրտեսների» լինեն:

Նոյն կապակցութեամբ, դոկտ. Էհսան Մովահեդեանը նախօրօք արձանագրել էր, որ Բաքուի ռեժիմը հազարաւոր մարդկանց է ձերբակալել կրօնական մօտեցումների, կամ Իրանի հետ բարեկամութեան կոչերով հանդէս գալու յանցանքով, եւ փորձում է ստիպել նրանց ցուցմունք տալ Իրանի դէմ, կամ թմրանիւթերի առեւտրով զբաղուելու վարկածի եւ Իրանի հետ կապերի մասին կեղծ խոստովանութիւններ անել:

Նոյն կապակցութեամբ Բաքուի պետական հեռուստաալիքը գիտակցելով ձերբակալուածների դէմ բացուած գործի ու յանցանքի ծանրութիւնը, նոյն կեղծ երկրի դիւանագիտական ապարատի փոխարէն յայտարարութիւն է տարածել պնդելով, որ ձերբակալուածները որեւէ կապ չունեն Բաքուի հետ:

Չնայած յայտարարութեան վերջում այս հեռուստաալիքի հաղորդավարը, ով նոյնպէս Իրանից վտարուած պանթուրքիստ է, առաջ ընկնելով եւ արդարացում փնտրելով իր բացայայտուած «վոհմակակիցների» համար, նշել է. «Այս ձերբակալութիւնները պայմանաւորուած են Իրանում սպասող ընտրութիւնների, ինչպէս նաեւ Ուրմիա լճի ցամաքելու հետ կապուած բողոքի ակցիաներով»:

ԱԼԻՔ
Օրաթերթ

Արտօնատէր՝ ԱԼԲԵՐՏ ԱՃԵՄԵԱՆ
Հեռախօս՝ (0098-21) 88768567 - 88761154
Հեռապատճէն՝ 88760994
Փոստարկղ՝ 11365-953 Թեհրան - Իրան

آلیک
روزنامه سیاسی، اجتماعی، ادبی و هنری
صاحب امتیاز: موسسه جمعیت ادبی آلیک
مدیر مسئول: آلبرت عجمیان
خیابان سهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶
کدپستی: ۱۵۵۸۸۳۳۹۱۱
تهران صندوق پستی: ۹۵۳-۱۱۳۶۵ فاکس: ۸۸۷۶۰۹۹۴
تلفن: ۸۸۷۶۱۱۵۴ - ۸۸۷۶۸۵۶۷ چاپخانه آلیک

ALIK ARMENIAN DAILY
Add.: 16, Shahid Mohebi Ave., North Sohravardi Ave.,
Tehran 1558833911, Iran P. O. Box: 11365-953
Tel.: (0098-21) 88768567 -88761154
Fax: 88760994

E-mail : info@alikonline.ir
www.alikonline.ir

ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ
ԼՒԱՑՔԻ ԵՒ ԱՄԱՆ ԼՒԱՑՈՂ
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ
ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Հեռ. 26320084 եւ 09124187835,
Վահիկ Իսկանդարեան

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Մեր խորին շնորհակալութիւններն ենք յայտնում՝ Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Սեպուհ Ս. արք. Սարգսեանին, Իրանի Իսլ. խորհրդարանում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր Արա Շահվերդեանին եւ Ալենուշ Շահվերդեանին, Իրանի Իսլ. խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանին, «Ալիք» հասպատութեան, «Ալիք» օրաթերթի տնօրէնութեան, խմբագրութեան եւ աշխատակազմին, Անահիտ եւ Վարդան Վարդանեաններին, Իրանի Հայ արհեստաւորների միութեան, Ալբերտ եւ Քլար Մութաֆեաններին, Թեհրանում Էսպոնիայի պատուոյ հիւպատոս՝ Արմէն Մութաֆեանին, «ՀՈՒՄԿ» հասպատութեան, Օժիկ եւ Վարուժան Առաքելեաններին, Վազրիկ Պետրոսեանին՝ ընտանեօք, Թ. Հ. Թ. Թեմական խորհրդին, Անահիտ, Նարբէ եւ Վահէ Բաղդասարեաններին, Հ. Մ. «Սարդարապատ» միութեան վարչութեան եւ անդամներին, Հ. Մ. Մ. «Նայիրի» միութեան վարչութեան եւ անդամներին, Արաքի Հայոց եկեղեցաղպրոցական հոգաբարձութեան, Հ. Ուս. «Չհարմահալ» միութեան, Իրանում եւ արտասահմանեան այլ երկրներում գտնուող բոլոր ազգականբարեկամներին, ծանօթներին, հարազատներին, աշխատակիցներին, ընկեր-ընկերուհիներին, ովքեր անձամբ, հեռախօսով, մամուլով կամ սոցիալական ցանցերի միջոցով վշտակցեցին մեզ, մեր կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝ մեր շատ սիրելի եւ թանկագին՝

ՎԱՐԴԱՆ ԴԱՒԹԵԱՆԻ

ցաւալի մահուան առթիւ:

ԴԱՒԹԵԱՆ ԵՒ ԻՒԹՈՒՋԵԱՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ

ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

Մեր սրտագին շնորհաւորանքն ենք յայտնում
մեզ համար կեանքից աւելի թանկ՝ մեր սիրասուն թոռնիկին՝

Վահէ Խուդավերդեանին,

**երկրի մակարդակի մրցոյթներին,
ժայռամագլցման ճիւղում երկրորդ տեղը գրաւելու եւ
46-րդ համադպրոցական խաղերին ջահակիրի դիրքին
արժանանալու համար:**

Մաղթում ենք նրան առաւել յաջողութիւններ եւ
բարձր նւաճումներ, բոլոր ասպարէզներում:

Քեզ սիրող եւ յարգող՝ մեծմամ եւ մեծպապ՝

**ԾԱՂԿՈՅՇ ԵՒ ԱՐՇԱԼՈՅՍ ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՆԵՐ
(ՆՈՐ ՋՈՒՂԱ)**

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Մեր խորագզաց ցաւակցութիւններն ենք յայտնում՝Մանասեան եւ Ղազարեան ընտանիքներին իրենց կրած անփոխարինելի կորստի եկեղեցուս հիմնադիր՝

**ՆԱՋԻԿ ՄԱՆԱՍԵԱՆԻ
(ՂԱՋԱՐԵԱՆ)**

ցաւալի մահուան առթիւ:

Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒ, ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ, ԴՊՐԱՑ ԴԱՍ, ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑ ԵՒ ՊԱՇՏՕՆԵՈՒԹԻՒՆ

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Մեր խորագզաց ցաւակցութիւններն ենք յայտնում՝Մանասեան եւ Ղազարեան ընտանիքներին իրենց կրած անփոխարինելի կորստի միութեանս անդամուհի՝

**ՆԱՋԻԿ ՄԱՆԱՍԵԱՆԻ
(ՂԱՋԱՐԵԱՆ)**

ցաւալի մահուան առթիւ:

Հ. Մ. «ՍԱՐԴԱՐԱՊԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Իմ խորագզաց ցաւակցութիւնն եմ յայտնում՝ Մանասեան եւ Ղազարեան ընտանիքներին ու միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր ու անփոխարինելի կորստի՝

**ՆԱՋԻԿ ՄԱՆԱՍԵԱՆԻ
(ՂԱՋԱՐԵԱՆ)**

ցաւալի մահուան առթիւ:

**ՇՈՒՇԱՆԻԿ ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆ
(ՍՈՂՈՄՈՆԵԱՆ)**

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Մեր խորագզաց ցաւակցութիւններն ենք յայտնում՝Զովէլեան եւ Մեհրաբեան ընտանիքներին ու միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր ու անփոխարինելի կորստի՝

**ՄԱՐԻԱՄ ՄԵՀՐԱԲԵԱՆԻ
(ԶՈՎԷԼԵԱՆ)**

ցաւալի մահուան առթիւ:

**ԹՈՐԳՈՄ ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆ
ԵՒ ՇՈՒՇԱՆԻԿ ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆ
(ՍՈՂՈՄՈՆԵԱՆ)**

ՄԱՀԱԶԴ

Խոր վշտով համակուած յայտնում ենք մեր շատ սիրելի եւ թանկագին՝

ՍՄԲԱԴ (ՍՈՄԻԿ) ՋԱԲԱՐԵԱՆԻ

ցաւալի մահը, որը տեղի ունեցաւ հինգշաբթի, փետրուարի 8-ին:

Թաղումը կը կատարուի շաբաթ փետրուարի 10-ին, ժամը 14:00-ին, Նոր Բուրաստան գերեզմանատանը:

Յուղարկաւորներից խնդրում ենք նոյն օրը՝ ժամը 12:45-ին ներկայ գտնուել հետեւեալ հասցէին գերեզմանատուն մեկնելու համար:

ՀԱՍՑԷ՝

Հաւթէ թիր հրապարակ, Բահարմասթիան փողոցի սկիզբը:

Յաւակցութիւնները՝ գերեզմանատանը եւ Հ. Ուս. «Չհարմահալ» միութեան սրահում:

ՍԳԱԿԻՐՆԵՐ՝

Անահիտ Քաղխողազաղէ՝ այրին:

Թալին եւ Թադէ Զաքարեաններ եւ Նայիրի Աբուլեան դուստրը, որդին եւ հարսնացուն:

Սիլւա, Շահիկ եւ Հարմիկ Շահբազեաններ՝ քոյրը՝ ընտանեօք:

Վաչիկ, Մանիկ եւ Հայրերդ Զաքարեաններ՝ եղբայրը՝ ընտանեօք:

Ալֆրէդ,Շաքէ եւ Արգիշտի Աբուլեաններ՝ խնամիները:

Աղրինէ եւ Սուրիկ, Նարինէ եւ Արամիկ Սէֆեաններ՝ քենին՝ ընտանեօք:

Ալիս Գարապետեան՝ զաւակներով՝ քենին՝ընտանեօք:

Սարօ եւ Քաթիա, Էլին եւ Սելինա Սարոյեաններ՝ աներորդին՝ ընտանեօք:

Հերոս եւ Վալենտին, Ալեքօ եւ Ալիկ Քաղխողազաղէներ՝ աներորդին՝ ընտանեօք:

Արիս եւ Այլին Շահբազեաններ, Նայիրի եւ Արբի Ասատրեաններ՝ քրոջ զաւակները:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Օժանդակելու համար օրաթերթիս՝ կարող էք ձեր հին թղթերը յանձնել

«Ալիք» օրաթերթին՝ առաւօտեան ժամը 8-ից մինչեւ ժամը 20:00-ը

(Մեծ քանակութեան պարագայում՝ նախապէս համադրելու խնդրանօք)՝ հետեւեալ հասցէով.

Հիւսիսային Սոհրեւարդի պող., Մոհեբի փողոց, համար 16

Հեռ.՝ 88761154

«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ

Երկու տարբեր թռիչքներ դէպի՝ Հայաստան

ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ

هواپیمایی ایران ایرتور IRAN AIRTOUR AIRLINES

هواپیمایی قشم Qeshm Air

برای تهیه بلیط می توانید با

شرکت حمل و نقل بین المللی و مسافرتی ستی

agency@sati-co.com ۹ -۸۸۵۴۱۲۹۸ و ۵-۸۸۵۴۱۲۴۲-۰۲۱

و در شهر اصفهان با آژانس آرمان گشت «ناربه ژاردن» ۰۹۱۳۳۰۰۸۰۲۹

و شباهنگ سیر «رافیک خداوردیان» ۰۹۱۳۳۰۵۳۸۳۵ تماس حاصل نمایید.

«ԲԱԶԷ» ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

آژانس مسافرتی «بازه»

BAZE TOUR & TRAVEL AGENCY

Հասցէ՝ Կոմիտաս 20, բն. 22, Երեւան, Հայաստան

Հեռախօս՝ +374 965 75 305 եւ + 374 102 22 824

نشانی: خیابان کومیتاس، شماره ۲۲، ایروان – ارمنستان تلفن: ۸۲۴ ۲۲ ۱۰۲ ۳۷۴+ , ۳۰۵ ۷۵ ۹۶۵ ۳۷۴+

Address: Komitas St., Bld.20, Apt. 22 E-mail: info@bazetravel.am

Յեղափոխութեան յաղթանակի տարեդարձի առիթով՝

Միաստուածային կրօնների նահատակների շիրիմների օծման եւ խնկարկման արարողութիւնը՝ Նոր Բուրաստան գերեզմանատանը

«ԱԼԻՔ» - Հինգշաբթի՝ փետր. 8-ին Վարդանանց տօնի խորհրդանշական օրուան զուգահեռ, Թեհրանի Նոր Բուրաստան գերեզմանատանը տեղի ունեցաւ 8-ամեայ պատերազմի միաստուածային կրօնների նահատակների շիրիմների օծման եւ խնկարկման արարողութիւնը:

18-րդ համազգային ոգեկոչման արարողութիւնը, որի ընթացքում նահատակների շիրիմներին խոնարհւում են ծաղիկներ, ինչպէս նաեւ տեղի է ունենում ինքնաթիռից ծաղիկների յորդում, իրականացւում էր «Բոլոր կրօններն ընդդէմ սիոնիզմի» կարգախօսով, որի ընթացքում միաստուածային կրօնների ներկայացուցիչներն ու առաջնորդները լրագրողներին տուած առանձին հարցազրոյցներում հանդէս եկան Պաղեստինի ժողովրդին աջակցելու կոչերով:

Միջոցառումը տեղի ունեցաւ Թեհրանի նահանգապետ Ալիռեզա Ֆախարիի, կրօնական փոքրամասնութիւնների հարցերով Նախագահի խորհրդական մամուստա Աբդոլսալամ Քարիմին, Իրանի միաստուածային կրօնների առաջնորդների, Իսլամական խորհրդարանում կրօնական փոքրամասնութիւնների պատգամաւորների, Թեհրան նահանգի Նահատակների հիմնարկի տնօրէնի, Ղիամդաշտի քաղաքապետի եւ իրանահայ, զրադաշտական, ասորական, եւ հրէական համայնքների նահատակների ընտանիքների ներկայութեամբ:

Իրանի Իսլամական Հանրապետութեան օրհներգով մեկնարկուած միջոցառմանը Հայոց Առաքելական Եկեղեցու կարգով եւ նահատակների հոգու խաղաղութեան համար տեղի ունեցաւ կրօնական արարողութիւն:

Արարողութիւնից անմիջապէս յետոյ Տ. Գրիգորիս քհնյ. Ներսիսեանի միջոցով ընթերցւեց Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Մեսրուռ արք. Սարգսեանի պատգամը, որտեղ «Բահման 22»-ը շնորհաւորելով Իսլ. յեղափոխութեան գերագոյն առաջնորդին եւ համայն Իրանի ժողովրդին, Սրբազան Հայրն ընդգծած նշել էր, որ պարտադրուած պատերազմին Իրանի ժողովուրդն իր ամուր հաւատքով մէկ բռունցքի պէս կանգնեց թշնամիների դէմ եւ պաշտպանեց իր հայրենիքն ու յեղափոխութիւնը:«Աւելի քան հազար տարի Իրանի հողում ապրած հայ ազգը եւս մեծ ներդրում ունեցաւ հայրենիքի եւ յեղափոխութեան պաշտպանութեան գործում»,- նշուած էր պատգամում:

Ապա ելոյթ ունեցաւ Թեհրանի Նահատակների հիմնարկի գլխաւոր տնօրէն Աբբաս Ալի Ռեզային, ով անդրադառնալով միաստուածային կրօնների նահատակների անուրանալի դերին Իսլ. յեղափոխութեան յաղթանակի եւ 8-ամեայ պաշտպանութեան շրջանում, նշեց. «Իսլամական յեղափոխութեան յաղթանակից մինչ այսօր միաստուածական կրօններն աւելի քան 184 նահատակ եւ 606 հաշմանդամութիւն ունեցող վետերան են նուիրել երկրին: Այս թւին պէտք է յաւելել նաեւ շուրջ 44 ռազմագերիների, որոնք նոյնպէս միաստուածային կրօնների համայնքներից են»:

Թեհրանի նահանգապետ Ալիռեզա Ֆախարին եւս ելոյթ ունենալով անդրադարձաւ Իրանի ժողովրդի բազմազանութեանն ու խաղաղ համակեցութեան փաստին եւ նշեց, որ այն առաւել ընդգծած դրսեւորում ստացաւ, երբ բոլորը վտանգի պահին ուս-ուսի դուրս եկան պաշտպանելու Հայրենիքի սրբազան հողն ու յեղափոխութեան արժէքները:

Ընթացքում մուրշիդ Միրզա Ալին «Շահնամէ»-ի ընթերցումներով խաղարկեց Իրանի էպիկական պատմութիւններից մէկը:

Միջոցառմանը ելոյթ ունեցաւ նաեւ Իսլամական խորհրդարանում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր Արա Շահվերդեանը: Պրն. Շահվերդեանն անդրադառնալով, որ անմահացած այս հերոսներն իրենց կեանքը զոհաբերեցին յանուն մեր ազատութեան պահպանման եւ պաշտպանութեանը, յաւելեց. «Գտնւում ենք Իսլամական յեղափոխութեան տարեդարձի շեմին: Յեղափոխութեան վեհ իդէալներն ու դրա արմատները համախմբում են հասարակութեան բոլոր խաւերին, անկախ իրենց դաւանանքից կազմելով համահունչ ամբողջութիւն»:

Արա Շահվերդեանը նշելով, որ Իրանի կրօնական փոքրամասնութիւնները, իրենց մուսուլման հայրենակիցների հետ միասնաբար են մտածում Իսլամական յեղափոխութեան առաջընթացի մասին, յաւելեց, որ միասնութիւնն է հասարակութեանը դէպի առաջընթաց ուղեկցողը, իսկ Իրանում միասնութիւնը միայն կարգախօս չէ, այն հազարամեակների ապրելակերպ է:

Միջոցառման աւարտին խորհրդանշական միասնութեան լուսանկարից յետոյ նախաձեռնող կողմը նահատակների ընտանիքներին յուշանուէրներ յանձնեց, որոնց թւում գնահատեցին նաեւ նահատակներ՝ Ռազմիկ Խաչատրեանի եւ Ալֆրէդ Գաբրիի ընտանիքները:

Հ. Մ. Մ. «Նայիրի» միութեան Գրական խմբի եւ Արուեստից բաժանմունքի նախաձեռնութեամբ՝

Նշանաւորուեց Վարդանանց տօնը

«ԱԼԻՔ», Կ. Դ. - Հայ ժողովրդի ազգային նկարագրի ձեւաւորման գործում իր ուրոյն եւ անժխտելի դերը զբաղեցրած Վարդանանց գոյաբանական պայքարի տօնը նշանաւորուեց:

Այդ առիթով Հ. Մ. Մ. «Նայիրի» միութեան «Սուքերեան» սրահում, Գրական խմբի եւ Արուեստից բաժանմունքի նախաձեռնութեամբ,փետրուարի 8-ին, երեկոյեան՝ կազմակերպուել էր բանախօսական-գեղարուեստական երեկոյ: Օրուայ բանախօս էր հրաւիրուել «ԱԼԻՔ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Արամ Շահնազարեանը: Տէրունական աղօթքով մեկնարկած միջոցառման հաղորդավար Հիլդա Աղաքեանը ընթերցեց բացման եւ ողջոյնի խօսքը:

Միջոցառումը զուգորդուած էր միութեան «Նայիրի» պարախմբի ելոյթով, ասմունքներով եւ ազգային ու հոգեւոր մեներգերի կատարմամբ: Հանդիսութեանը բեմ հրաւիրուեց օրուայ բանախօս Արամ Շահնազարեանը, եւ համապարփակ գծերով հայ ժողովրդի գոյատեւման հարցով Վարդանանց պատերազմի թողած անժխտելի դերակատարութեանը անդրադարձաւ: Իր ելոյթի ընթացքում բանախօսը կենտրոնացաւ այն հոգեբանական, աշխարհաքաղաքական, աշխարհամտածողական եւ ազգային մտածողութեան խորը ազդեցութեան մասին, որ Վարդանանց հերոսամարտը թողեց մեր ազգային նկարագրի, աշխարհամտածողութեան ձեւաւորման, եւ այսպէս կոչուած հայ ժողովրդի գենետիկայի վրայ, որը հայ ժողովուրդը ժառանգեց 451 թւականին եւ կրում է մինչ օրս:

Վերջում հրաւիրուեց իր խօսքը փոխանցելու միութեան վարչութեան նախագահ Մերոժ Օհանեանը:

Միջոցառմանը իրենց ներկայութեամբ պատուել էին Իրանի Իսլամական խորհրդարանում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր Արա Շահվերդեանը, Թ. Հ. Թ. Պատգամաւորական ժողովի ատենադպիր Արփի Ալավերդեանը, Թ. Հ. Թ. Թեմական խորհրդի ատենապետ ճրտպ. Նորայր Արամեանը եւ ատենադպիր Հայրիկ Աղանեանը, Տ. Գրիգորիս քհնյ. Ներսիսեանը, «ԱԼԻՔ» հաստատութեան, եկեղեցական խորհուրդների, միութիւնների ներկայացուցիչներ եւ հայրենակիցներ:

Յատկանշական է, որ Վարդանանց տօնի առիթով նոյն օրը առաւօտեան Սրբոց Վարդանանց եկեղեցում նախագահութեամբ Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Մեսրուռ արք. Սարգսեանի մատուցւեց ս. պատարագ:

Մանրամասնութիւնները օրաթերթիս առաջիկայ համարներից մէկում:

SET Coffee

فروشگاه: هفتم تیر، قائم مقام فراهانی، خیابان فجر، پلاک ۱۰

کارخانه: شهرک صنعتی خوارزمی، بلوار هاگنولیا، پلاک A117

0936-6726563

021-88305827

www.set-coffee.com

قهوه ست

املاک هنرمندان

● بزرگترین آژانس مسکن مرکز شهر تهران (منطقه ۶)

● خانه های قدیمی تخصص ماست

آدرس: میدان هفت تیر، کریمخان، خردمند شمالی، نبش دی، ساختمان ۱۱۹، پلاک ۴

تلفن: ۸۸۸۴۵۵۶۶ –۸۸۸۴۵۵۷۷

واتس آپ: ۰۹۱۲۹۵۸۵۱۴۰

مدیر داخلی (هماهنگی): ۰۹۳۰۹۲۱۳۷۲۴

مدیریت: ۰۹۱۹۴۳۱۸۳۱۹ امیر قربانی

«Արարատ»

Ամէն տեսակ տնային իրերի գնորդ

سماور ذغالی، نقره جات، ظروف مسی، چراغ لاله و لوستر، رادیو لامپی ، رادیوگرام مبله، صفحه گرام ، لوازم چوبی آنتیک و خرده

Հեռ.՝ 88523388

ՔԱՐԻՄԻ

Գորգերի, սառնարանների եւ գազ սպառող զովամուղի, կահոյքի եւ անտիկ իրերի լաւագոյն գնորդ

خریدار فرش، یخچال فریزر، کولر گازی، مبلمان، خرده ریز و لوازم آنتیک

Հեռ.՝ 88594063 եւ 09 12 11932 12

Մեր ընթերցողների ուշադրութեան

Կիրակի, փետրուարի 11-ին, 22 Բահմանի առիթով խմբագրատունս փակ լինելով՝ թերթիս յաջորդ համարը լոյս կը տեսնի երկուշաբթի, փետրուարի 12-ին:

«ԱԼԻՔ»

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Այսու ազգային մարմինների, հիմնարկութիւնների, միութիւնների, դպրոցների եւ ընկերութիւնների ու բոլոր յարգելի ընթերցողների ուշադրութեանն ենք յանձնում, որ իրենց

յայտարարութիւնները օրաթերթիս յանձնեն առ. ժամը 8-ից մինչեւ կ. յ. ժամը 2-ը

ամենաուշը երեք օր (աշխատանքային օր) նախքան տպագրութեան թւականը,

բացի

մահազդերից,

որոնք ընդունւում են նաեւ նոյն օրը առաւօտեան՝ մինչեւ ժամը 9-ը:

«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ